

ՀԱՐՆԵՒԱՆՑԻ ՀԱՅԵՆՑԻ

Հ Ա Յ Ո Ց

ՀԵԹԱՆՈՍՈՒԹԵԱՆ ՈՒ ԲՐԻՍՅՈՆԵՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

Մեծարելի ունկնդիրք.



այոց ազգի գոյութիւնն այնքան հին է, որքան որ է մարդկային ազգի պատմական ժամանակը Ս. զրքէն դուրս. Հայոց բրիւտոնէութեան որպիսութիւնը հասկանալու համար, պէտք է նախ նրանց հեթանոսութեան որպիսութեան վրայ մի գաղափար ունենայ, այդ պատճառով պարտաւորուում եմ այստեղ մի կարճ հայեացք դարձնել նրանց հեթանոսական կրօնի վրայ: Յայտնուած կրօնքէս դուրս, կրօններու ծագում մտքի և հոգու կատարեալ կարողութիւն ունեցող մարդկանցմէ է առած. բայց, ոչ այնպէս, ինչպէս որ այդ կրօնները մարդկանց մէջ պաշտուած ժամանակ մեղ երևում են, հապա շատ բնական՝ և պարզ մարդկանց խելքին ու մտքին ըմբռնելի: Ժամանակն ու մարդիկն են եղել որ կրօնները կամ հաւատալիքը, ինչպէս բնութեան

ամեն երևոյթները կերպարանաւորել են ու իրանց ուզած ձևին են բերել, այնպէս՝ ինչպէս որ եղել են իրանք մարդիկ. այսինքն, կրօններն ու հաւատալիքը մարդկանց նշման ենթարկուել են ժամանակին ազդեցութեան կամ թէ ժամանակին ազդեցութիւնն են կրել իրենց վրայ, իրանց ընկերական յեղաշրջութեամբ և իրանց բարուց ներդրութեամբ: Այն գրքերը՝ որոնցմէ քաղել են մարդիկ իրանց կրօնի ուսմունքն ու հրահանգը և որոնք իբրև աստուածային են պաշտել և անելծ ու անարատ պահել, ամեն փոյթ ու խնամք տանելով, որ ոչ մի բան իր նախնական յստակութենէն չփոփոխուի ու չխանգարուի և նրանց պատուէրները իբրև աստուածներու բերնէն դուրս ելած և իբրև բնութեան օրէնք ընդունուին. բայց մարդիկ՝ միշտ յաջողել են մեկնութեանց և աւելագրութեանց ձեռքով այդ գրքերու բանաձևած կրօնին կամ հաւատքին հողին, միտքն ու իմաստը փոփոխել կամ իրանց ուզածին պէս կամ ժամանակիս պահանջածին: Այդպէս է եղել ամեն կրօնքներու և հաւատալիքներու վիճակ, ինչպէս ամեն ազգի պատմութեան մէջ, այնպէս էլ հայոց ազգի պատմութեան մէջ, ինչպէս պիտի տեսնէք այս կարճ ճառագրութեանս մէջ:

ՀԱՅՈՑ ՀԵԹԱՆՈՍՈՒԹԻՒՆԸ

Մեր գրաւոր պատմութեան մէջ, հայոց գոյութեան սկզբնաւորութեանը, այս պաշտամունքն է երևում, հայկ անուն նահապետի որդին Արմենակ Քրիստոսէ երկու հազար տարի առաջ Արարատ գաւառին մէջ, Երասխ գետի մօտերը, անտառներ է տնկում, որոնք ո՞ստ են եղել անուանում: Այդ անտառներում կատարուած պաշտամունք միայն իրանց նուիրուած մարդկանց ձեռքով են եղել կատարում: Այդ մարդկանց առաջինն է լինում, Արայ անուն

Նահապետի որդին Ասուշաւան, որ հոգու և մտքի զօրութեան տէր մարդ լինելով, կոչուում է Սօսանուէր: Պաշտամունքն է եղել այս. հայոց քրմերը այդ անտառներու ծառերու տերևներուն քամուց շարժած ժամանակ, դրանց հանած շշրտոցէն աստուածային պատգամներ են եղել հանում և իրանց ժողովրդին հաղորդում: Այդ պաշտաման մնացորդ՝ մինչև Քրիստոսէն տոտաներկու դար յետոյ, Արևորդիք կոչուած հայոց մի փոքր ժողովրդի մէջ երեւում էր Սամոսատ քաղբում. իսկ Կովկասեան աղգաց ու աղանց մէջ մինչև այս վերջին ժամանակներում:

Այդ պաշտամունքէն յետոյ, տեսնում ենք մեր նոյն գրաւոր պատմութեան մէջ մարդկանց աստուածացումը: Այդ աստուածացած մարդկանց հայր *Հիւցազունք* էին կոչում, որոնցմէ մեր գրաւոր պատմութեան մէջ յիշուածն է Վահագն մեր Տիգրան Նահապետ թագաւորին որդին: Այդ աստուածամարդուն ծնունդն էլ է հրաշալի, երկինք համբառնալն էլ. դրա ծնելիս՝ երկինք, երկիր և ծով ցաւ են քաշում ու ծնում են մի երեխայ բոցերու նման մազերով և արեւու նման էլ աչքերով: Մինչև Քրիստոսի հինգերորդ դարը այդ դիւցազնին դիւցազներգութիւն կայ եղել հայոց ժողովրդի մէջ. դա վիշապներու յաղթող լինելուն, կոչուում է այդ պատճառով *Վիշապաքաղ*. Նոյնպէս և *յարդգող* էլ է կոչուում դա Ասորեստանցոց *Բարշամին* պատերազմի սպիտակափառ աստուծուն յարդը գողնալուն և այդ գողօնով դէպի երկինք վերանալուն և երկնքի ճամպուն վրայ թափած լինելուն յարդը, երկնքի այդ մասը, որն այսօր, աստղանոյշ ենք կոչում, հնումը *յարդգող* է եղել կոչուած հայոց մէջ:

Մեր գրաւոր պատմութեան մէջ, սկսած Նախապատմական ժամանակներէն մինչև հինգ դար Քրիստոսէ առաջ, այդ երկու տեսակ պաշտամունքն ենք գտնում յի-

շուած. բայց մեր աչքի առաջ ուրիշ աստուածներ և ուրիշ պաշտամունք են հանում հայկական սեպագիր արձանագրութիւնը, որ այս վերջին տարիներումս հնազէտ պատմաբանք յաջողեցան ուսումնասիրել և պատմական ծանօթութիւնը քաղել դրանցմէ:

Ահաւասիկ մեր նախնի հայոց կրօնի մասին ինչ են ասում հնադէտ պատմաբանները, Ֆ. Լընորման, Դը-Րօ-բերտ, Սէյս, Մորտման և ուրիշներ:

«Հայկական արձանագրութեանց ընթերցման ճշգրիտ եղրակացութեան մէջ աչքի զարնող մի բան որ կայ, այն է որ, հաստատում են թէ Նայիրիի (Հայաստանի) ազգաց ու ազանց մէջ ինչպէս ազգային կամ ցեղական միութիւն կայ, այնպէս էլ կրօնական միութիւն կայ: Աստուածները նոյնն են ամեն տեղ թէ Գարինու շրջակայներէ և թէ Վանայ ու Բալուայ կողմերէ երևան ելած արձանագրութեանց մէջ, ինչպէս որ մի ազգաբանական և լեզուաբանական կատարեալ միութիւն կար հին Հայաստանի ժողովրդի մէջ իր բաղաբական բաժանման ժամանակ մի շատ իրարմէ անկախ թագաւորութեանց (նախարարութեանց կամ նահապետութեանց) մէջ, նոյնպէս էլ մի բացարձակ կրօնական միութիւն է երևում դրա մէջ, որը կապակցութեան տեղ էր բռնում ժողովրդի բոլոր մասերու միջին:»

«Այս կրօնը կայանում է եղել գլխաւորապէս մի ծայրագոյն երեքութեան պաշտաման մէջ, որու ներքը աստիճան աստիճան ստորին աստուածներ է եղել կարգած ժողովուրդը: Բարձրագոյն աստուածը Հալտիս անունն է եղել կրում երկու համազն ընկերներով. Տէհսթասն է մթնոլորդի աստուածը և Արտէնիս՝ արէգի աստուածը. երկրորդական աստուածները «Հալտիսի որդիք» անունն են երբեք մինչև հիմա թուով քառասուն և վեց են եղել գտնուած, որոնցմէ շատերը առնուած են եղել հա-

րեան ազգերու աստուածներէ, կամ թէ այդ աստուածներն երևում են որ Նայիրի աշխարհի ամեն մէկ գաւառներու յատուկ աստուածները լինին, «Թիէնայի (Վանայ) թագաւորները միշտ զբաղած են եղել այդ աստուածներու շնորհը ստանալու համար, նոր տաճարներ շինել և հին տաճարները նորոգել և եղածներն էլ զարդարել: Այդ թագաւորներէն մին, այսպէս է խօսում եղել բարձրագոյն աստուծուն ուղղելով իր խօսք. «Հալտիսին, տիեզերքի տիրողին, Սարտուրիս, Արկեստիսի որդին այս տաճարս վերանորոգեց, նոյնպէս այդ դուռն էլ, որ Հալտիսի դուռն է կոչուում, վերաշինեց, որ կործանուած էր և Հալտիսին նուիրեց, որ է տիեզերքի տէրը, մեծ աստուածնիրու աղօթք Սարտուրիսի համար (որ է) զօրաւոր թագաւոր և իշխան Տոսպիս քաղբի»:

Մօրտման գիտնականն էլ, այս յետագայ տեղեկութիւնքն է տալի հեթանոս հայոց կրօնի մասին հայկական սեպագիր արձանագրութեանցմէ քաղելով. «Հին հայոց բուն ազգային աստուածուհին է եղել Անահիտ, որուն ամեն արձանագիր յիշատակարաններում յատուկ աղօթքներ կան եղել ուղղուած»։ Ինչպէս որ Հելենացոց եւ Հռոմայեցոց մէջ զանազան տեղերու անուններով աստուածներ կային, ասում է Մօրտման, նոյնպէս էլ հին ժամանակում հայոց մէջ էլ կան եղել մի Անահիտ Անի քաղբի, մի Անահիտ գերանդաւոր, (մանգաղը ձեռին), մի Անահիտ շնորհալի, մի Անահիտ անոխակալ, մի Անահիտ մարդկանց համար և այլն: Անահայ պաշտամունք հայոց մէջ խիստ շատ հին է եղել և Տուրանեան լեզուով Հուսնի աստուածութիւնն նշանակում է եղել: Հայր էլ հելլենացոց և պարսից նման երեք գլխաւոր աստուածներ ունին եղել երրորդութիւն կազմող, Անահիտ, Դիասպ և Փառ: Դիասպը պարսից Ձիշպէշ աստուծու հայերէն անունն է, և կարծւում է թէ Անահիտ Դիասպի կինը լինի: Իսկ

Փառ (փառք) որով թէ հայոց և թէ պարսից մէջ շատ անուններ են կազմուած, ինչպէս Փառնակէս, Փառնաւազ, Փառնաքաղ, Փառազման, Փառներսեհ, Տիրափէռնէս, Հողեփէռնէս և այլն. և պատիւ է եղել համարուած այդ անունը կրելը: Այդ ծայրագոյն երեք աստուածներէ զատ, հեթանոս հայք բառասուն եօթն աստուածներ էլ ունին եղել, բայց այդ աստուածներուն որ սեռէ լինելը յայտնի չէ, միայն այդ աստուածներու անունները կրող անձանց սեռէն կարելի է իմանալ: Այդ աստուածներն իրանց բնական բաղարներով էլ ճանաչուած են եղել, օրինակ, աստուած քաղբին Տոսպայ, աստուած քաղբին Արսունայ և այլն: Ամեն աստուածներուն հաւասար զոհ չեն մատուցանուած եղել, մեծ աստուածներուն շատ զոհ, փոքր աստուածներուն քիչ զոհ: Յետագայ տասներկու աստուածներուն, Անահտայ, Դիասպայ, Փառայ, Արտանարասա... Ինուամասայ, Խոռթայ, Վա-ի, Վարդոյ, Զէփիառայ, Արսիմբրի և Լիմա-ի՝ մեծ զոհեր: Արզուաքասայ աստուծուն համապատասխանում է Արտակէրասա (Արտալերից բերդը): Արսիմետ նմանութիւն ունի Արշամայ: Խոռթն էլ պարսից Խոռտանէ է և գերմանացւոց Կոտը: Վա աստուծու անուն չէ, հապա նշան՝ որ Բէր է. իսկ Լիման՝ որու անունով մինչև այսօր մի կղզի կայ Վանայ ծովում, որը հին ժամանակ աստուածական պաշտաման նուիրուած մի տեղ է եղել. օրինակի համար Անահիտաքա, որ Երիզաւանն է. Կոմինու, Կոմանան (կէօմէնէկ), Փառ, այսօր մի գիւղ կայ այդ անունով Մոկաց գաւառում: Փառակա անունով էլ մի գեղ Զինակաք վիճակում: Դոտա Արտուգէտ, Ուա. մի գեղ Մամստան գաւառում: Տիտուա, Դատուան, Էլուր, Ալիւր գեղ Տոսպ գաւառում: Խաւրահ, Կեալար, նոյն գաւառում: Ներուսի, Ներսէս. Իրեմա, Արամ, Հուպա, Խուպ, Խիզանում, Խուպս, Քղիում և այլն և այլն:

Այժմ տեսնենք մեր ազգային պատմագիր հեղինակները, Ագաթանգեղ, Զենոբ Դլակ, Փաւստոս Բուզանդ, Մովսէս Խորենացի, Եղնիկ, Եղիշէ և այլն, ինչ որ աւանդում են մեզ մեր հեթանոս նախնեաց աստուածային պաշտամանց մասին:

Դրանց աւանդածներուն նայելով, Արամազդն է նախնի հայոց մէջ իբրև գերագոյն աստուած, հայր ամեն աստուածներու, դրան տրուած ածականներն են *մեծ, արի, արարիչ երկնքի եւսրերի, առատութեան և պարարտութեան պարգեւիչ*: Դա Զէնո - աւէստայում եղած Ահուրամազդանն է, դրա մեհեանը բարձր հայոց Դարանաղի գաւառի Անի ամրոցումն էր: Ապա գալիս է Անահիտը, այդ դիցուհին, որ բնաւ ամենևին Յունաց Դիանան չէ և ոչ էլ Ասորեստանցոց կամ փոքր Ասիացոց Արտեմիսը. այդ Անահիտ դիցուհին շատ մեծ պատիւ և փառք է տեսած մեր նախնի հայոց մէջ, որու նմանը ոչ մի ազգումը չէ տեսնուած: Դա Հայաստանում ամեն տեղ մեհեաններ է ունեցած և ոչ թէ միայն հայոց գրական մարդիկն են գովում այդ մեհեաններուն հարստութիւնը, հապա նաև յոյն և հռովմայեցի հեղինակները. Պլին ինքն է պատմում թէ հայք են եղած առաջին անգամ Անահտայ ոսկուց արձանը շինողները. դրա ամենէն երևելի մեհեանն էր Եկեղեաց գաւառում, ըստ Ագաթանգեղայ Անահիտ տիկինը մեր ազգին փառքը, մեր գոյութեան պահպանողը և ամեն ողջախոհութեան մայրն է եղել և մարդկային ազգի բարերարը: Մեծ և արի Արամազդի ցեղէն լինելով դա, ամբողջ Հայաստանեայց կեանքը նրա զօրութեամբ է եղել կենում. պէտք է գիտենանք որ, մեր հեթանոս նախնեաց Անահիտը ամենևին նմանութիւն չունի Ասորեստանցոց, Բաբելացոց և Փիւնիկեցոց Անահտայ հետ, որոնց մէջ սուրի մարդիկ և կանայք թմբկի ու փողի ձայնով անառակ պարերու և անամօթ անառակութեանց անձնատուր

էին լինում: Թէ որ մեր հեթանոս հախնիր Անահտայ պաշտաման մէջ մի այդպիսի բան ունենային, անշուշտ քրիստոնեայ Հայաստանի պատմագրերը լուռ չէին կենալ քրիստոնեայ Հայաստանցոց զգուեցնելու, որպէս զի հեռացնեն նրանք այդպիսի սուտ աստուածներ պաշտելուց, ընդհակառակն վկայում են թէ չբեղ պարզութիւն ունէր նրա պաշտամունքը, ինչպէս որ մայր զգաստութեան և առաքինութեան աստուծուն է վայելում: Անահտայ մեհեաններուն հայոց թագաւորներուն տուած նուէրներն անգամ վկայում են թէ հեթանոս հայք ինչ մաքրութեան գաղափար ունէին իրանց այդ դիցունու վրայ: Ինք քրիստոնեայ Աղաթանգեղը, պատմում է թէ հայոց Տրդատ թագաւորը հրամայել է ամբողջ Հայաստանը քրիստոնէացնող Դրիգոր պարթևին, որ Անահիտ դիցունուն սեղանին վրայ տիրեալատ ճիւղերով հիւստուած պսակներ նուիրէ, միթէ ծառերու այդ ճիւղերը և պսակները ցոյց չեն տալի հեթանոս Հայաստանում այդ Անահիտ դիցունուն մատուցուած երկրպագութեան պարզութիւնը: Դրա պաշտամունք շատ տարածուած է եղել Հայաստանում: մի պլխաւոր մեհեան Երիզաում, որտեղ թագաւորներ էին գընում պաշտօն մատուցանելու նրան. մի ուրիշը Արտաշատ քաղքում, մի երրորդը՝ Տարօն գաւառում Աշտիշատ քաղքին մէջ: Հեթանոս հայք Անահտայ կուռքին ՈՍԿԵԾԻՆ են կոչում եղել: Այդ երրորդ մեհեանը հարըստութեան կողմից ողջ Հայաստանում հռչակաւոր էր. ասում է Աղաթանգեղ, որ անբաւ գանձ ունէր, ոսկով լիքը, մեծ նախարարներուն բերած շատ արծաթները և տեսակ տեսակ նուերները պահուած են եղել այնտեղ: Այդ ընծաներու ճոխութեան մասին մի գաղափար ունենալու համար, բաւական եմ համարում նշանակել այստեղ Տրդատ թագաւորին պարսից դէմ արած արշաւանքէն ետ դարձած ժամանակ տուած ընծայները այդ Անահտայ մե-

հեանին, ճերմակ եղներ, ճերմակ նոխաղներ, ճերմակ ձիեր
և ճերմակ ջորիներ, պատուական ակներով և զոհարհե-
րով զարդարուած արծաթէ և ոսկէհուր զգեստներ ու
փառաւոր զարդեր: Սովորութիւն էր հայոց թաղաւորնե-
րուն՝ ամեն յաջող պատերազմէ յետոյ իրանց արած
աւարից հնդէն մին մհհեանի բաժին հանել, էլ դրանով
երեւակայեցէր, մեծարելի ունկնդիրք, թէ ինչ հարստու-
թիւն էր դիպուած լինում հայաստանի մհհեաններում:

Այդ Անահայ կշտին, երկու աստուածուհիք էլ կան,
Աստղիկ և Նանէ: Հեթանոս հայք այդ Աստղիկին Վա-
հագնի կին լինել էին կարծում: Իսկ Նանէին Արամազ-
դայ աղջիկը: Աստղիկան մի մհհեանը Տարօն գաւառի Աշ-
տիշատ բաղարումն էր, մի ուրիշն էլ Վասպուրականնա-
հանգի Անձեացեաց գաւառի Պարխուլ լեռան վրայ: Իսկ
Նանէին բարձր հայոց Եկեղեցաց գաւառի Թիլ աւանում:

Հին հայոց աստուածներու մէջ մին էլ կայ, որուն
ծագումը դեռ անյայտ է, դա է Տիւր Աստուածը, որու
մասին Ագաթանգեղում միայն մի տեղ յիշատակութիւն
կայ, իբր թէ դա քրմերու գիտութեան ուսուցիչը լի-
նի միանգամայն և Արամազդայ գրադիրը և հայաստան-
ցոց գիր ու արհեստ սովորեցնողը, նոյնպէս և երազահան
և գուշակ, այնպէս որ հին հայք դրա մհհեանն են եղել
դիմում իրանց տեսած երազներուն մեկնութիւնը ստա-
նալու: Մի վատ պաշտօն էլ ունի եղել դա, այն է՝ մի-
ղաւորները դժոխք կրել: Հայոց մէջ մինչև այսօր մի խօսք
է զրուցում մի անձի վրայ, որ ատելի է լինում իր ա-
րարքով, ասում են, զրոյդ տանի նրան կամ քեզ. ո-
րու նշանակութիւնն երկու հազար տարուց յետոյ մոռ-
ցուել է:

Մի գլխաւոր աստուած էլ կայ Միհր անունով, որը
պարսիցմէ առնուած լինելը յայտնի է. դա Արամազդայ
որդին է եղել, դրա մհհեանը Բարձր հայոց Դերջան գա-

ւառի Բազառին գեղումն էր և հարստութեամբ շատ ա-
նուանի։ Միհր որ արև է նշանակում, աներևան հրին աս-
տուածն է, ծանօթ է նաև Արեգակն արևու աչք անունով,
ինչպէս Ջէնդ աւէստան էլ Արամազդայ աչք է կոչումնը-
րան։ դա է այն պայծառափայլ հսկայն, որ վեհութեամբ
երկնքի վրայ իր ճամպան է առնում անապատները պըտ-
ղաբերելով և այլն։ Ապա գալիս է *Հուսինը*, որ կանանց
սեռական կրակին նշանակն էր, Մ. Խորենացին հրոյ եղ-
բայր է կոչում նրան։ Արևու և լուսնի գլխաւոր մեհեանն
էր Արմաւիր քաղաքում, որն ամենահին քաղաքն է Արա-
րատ նահանգի։ Իսկ երկրորդ մեհեանն էր Բազաւանում,
որն այսօր Բագու է կոչում, այդտեղ մշտափառ կրակ լի-
նելուն Արամազդայ կրակ էր կոչում և այլն։

Կրակի նման ջուրն էլ էին պաշտում հայք, որուն
Ակնեղըայր էին կոչում։ հին հայք ոչ թէ միայն ջուրն
էին պաշտում, հասկա նաև գետերը, դրանց մի սրբազան
յատկութիւն տալով. մասնաւորապէս Երասխ և Եփրատ
գետերը մեծ պատիւ ունէին, հայաստանի գլխաւոր քա-
ղաքներու մեծ մասը, կարելի է ասել ամենքն էլ գետա-
փերու վրայ են շինուած. ինչպէս Անի, Թիլ, Երիզա, Բա-
գյառլինջ, Աշտիշատ և այլն։ Տակիտն էլ այդ այդպէս
լինելը վկայում է, պատմելով թէ Եփրատայ տփերու վը-
րայ բնակողները կարծում էին որ այդ գետի ջրերը եր-
բեմն առանց յայտնի պատճառի աւելանում են և մօտ
ժամանակի համար քարեյաջող դէպք են գուշակում և այդ
ժամանակ ջրերու ծփանքէն իրանց գործերուն վերաբերող
գուշակութիւնք են եղել հանում, այս էլ է աւելացնում
նա թէ հայի գետերուն ձիւր են եղել զոհ մատուցանում։

Մի շատ երևելի աստուած էլ ունէին հայք, Ամանօր
անունով, որն ասել է նոր տարի։ Այդ աստուածն էլ, ըստ
Ագաթանգեղայ, տարեկան մրգերու և արմաթիքներու խը-
նամբ տանող և պաշտպանողն է եղել, վանատուր ղիք

էլ էր կոչուում նա, որ նշանակուում է մարդկանց պատըս-
պարուելու տեղ տուող: Դրա մեհեանն էր Արարատ նա-
հանգի Քաղրեանդ գաւառի Քաղաւան գիւղում: Տարուայ
սկզբում, որ է Նաւասարդ ամիսը (օգոստոս 11), նախնի
հայք Հայաստանի ամեն կողմէն այդ տեղ համախմբուում
էին և Ամանորայ տօնը մեծ հանդէսով կատարում, որ
վեց օր էր տևում: Այդ ժամանակ Քաղաւանի մեհեանի
բոլորտիքն էին կենում և այդտեղ ոչ միայն պատսպար-
ուում և պառկելու տեղ էին գտնում, ապա նաև զոհերէն
էլ բաժին էին վայելում:

Նախնի հայոց մէջ երկու բառ կան, *դժոխք* և
սանդարամետ, այդ երկու բառերն էլ պարսիցմէ է
վեր առնուած. *դժոխքն* էր գեւերու թագաւորութեան
տեղին, իսկ *սանդարամետը*, որ հեթանոս պարսից և
հայոց մէջ աշխարհիս մարուր հոգին էր նշանակում,
քրիստոնեայ հայոց մէջ բոլորովին դրա հակառակ նշա-
նակութիւն ունեցաւ, այն է դժոխային անդնդին .չար
հոգու նշանակութիւնը, կամ թէ դժոխքի իշխանը, սա-
ղայէլ և այլն:

Մինչև այստեղ, բուն հայկական աստուածներու վը-
րայ խօսեցանք, որոնք երկու հազար տարւոյ չափ պաշ-
տուել են մեր նախնի հայոց մէջ. դրանց շատ խորը ըս-
կզբնաւորութիւնը մեր այսօրուայ գիտնականներու հետա-
զօտութեամբ յայտնուեցան, որ հին արիական և սեմա-
կան ազգաց և ազանց աստուածներն են, որոնք նոյնչե-
ղերու պատկանող շուարար ժողովրդներու հետ մեր հայ-
րենի աշխարհ են գաղթել և մերաշխարհային կամ ազ-
գային աստուածներ են եղել դարերու ընթացքում. բայց
Քրիստոսէ մէկ երկու դար առաջ, տեսնում ենք որ, նո-
րանց թէ արեւրէն և թէ արեւմտքէն նոր աստուածներ
են գալի մեր աշխարհ և խառնուում են հնեւոր հետ, կամ
թէ միկնոյն աստուածներ են համարուում և Քրիստոսէ

հարիւր յիսուն տարի առաջ Հնդկաստանէն երկու մեծատոհմ եղբայրներ Գիսանէ և Դեմետր անունով մեր աշխարհ են գալի փախստական և այն ժամանակուայ թագաւոր Վաղարշակայ հրամանով Տարօն գաւառում հաստատուում են և Վիշապ անունով քաղաքն են հիմնում: ապա Աշտիշատ քաղաքն են դնում և այդտեղ իրանց Հնդկաստանում պաշտած աստուածներուն՝ կուռքերն են հաստատում: Յետոյ դրանց որդիք Քարբէ անուն լերան վրայ քաշւում են և այդտեղ երկու կուռք են կանգնեցնում, մին տափներկու գրկաչափ բարձր և միւսը տասներհինգ: Մեր Ձեռք Գլակ պատմչի խօսքին նայելով, հեշտութեամբ ճանաչում ենք որ դրանք Գանգեսի գետափի վրայ բնակողներէ լինին, քայց թէ ինչ տեսակ պաշտամունք էր այդ հնդիկներու պաշտամունք, ամենեւին տեղեկութիւն չունինք, այս միայն լաւ գիտենք որ, դրանք հինգ դար շարունակ մեր աշխարհի մէջ ապրում են մինչև որ չորրորդ դարու սկզբում քրիստոնէութիւնը դրանց ջնջում է:

Նմանապէս Քրիստոսէ մի դար առաջ, երբ մեր Արշակունի թագաւորներն Յռնաստանի վրայ են արշաւում, ըստ մեր Մ. Խորենացու, այդ տեղաց իբրև պատերազմի աւար պղնձէ թափծու ոսկէզօծ կուռքեր են բերում Հայաստան, Արտեմիսի, Հերակլէսի և Ապոլոնիու Հայաստանի գլխաւոր քաղաք Արմաւիրումն են հաստատում, նմանապէս Ողիմպեան Ջեսին, Աթենասին, (Մինէրվաին) Եփեսոսին, (Վիլքէնին) որոնք Դարանաղի գաւառի Անի ամրոցումն են դնում իրանց քրմերն էլ միասին: Մի ժամանակ յետոյ աստուածներու այդ կուռքերը իրանց համանման աստուածներու մեհեաններումն են տեղաւորում: Ջեսինը՝ Արամազդայ մեհեանում, Աթենասինը՝ Նանէի մեհեանում, Արտեմիսինը՝ Անահտայ, Հեփեսոսինը՝ Միհր աստուծուն, Ափրոդիտէինը (Վէնիւսինը) Աստղիկ դիցուհու

մեհեանում: Այդ աստուածները պատերազմի գերի առնելը և բերիլ նրանց տիրապետ թագաւորի երկրում հաստատելը, ինչպէս ասիական թագաւորութեանց, նոյնպէս էլ եւրոպական, այսինքն հռովմէական թագաւորութեան սովորական եղած մի բան էր:

Յունական աստուածներու հետ միասին եկան խառնուեցան և ասորի աստուածներն էլ: Զիշտ Քրիստոսի աշխարհիս վրայ եղած ժամանակին, մի Արշակունի թագաւոր Արգար անուն ասորաց Ծաքովկ, Բէլ, Բաթնիքաղ և Թարաթա աստուածներու կուռքերը Մծբինէ Եդեսիա է բերիլ տալի և այդ քաղքում հաստատում: Բայց դրանք թէև հայոցմէ պաշտուել են, բայց միշտ հայոց Միջագետքի սահմաններումն են մնացել: Նաբովկը՝ որ Նապուլին է, հին ասորիստանցոց կրթութեան և ուսման աստուածն էր, հայր և պարսր դրան ղալոր էին կոչում, իսկ հրէայք *արեսու գրագիր*, Բէլը՝ ասորիստանցոց աստուածներու հայրն էր, Բաթնիքաղը անծանօթ աստուած է: իսկ Թարաթան յունաց տէրքէտանն է, որու պատկերը՝ իրանովը, ձեռքերովն ու գլխովը կնոջն էր, իսկ իրանից վարը՝ ձկան պոչին:

Այդ մեծ աստուածներու կշտին կային նաև փոքրներ, կամ թէ աւելի ճիշտն ասելով հրեշտակներ կամ պաշտօնեայներ, որոնք աստուածներուն տրուած պատիւներուն քիչ շատ հաղորդ էին իրանք էլ: Սրանք էին այդ ոգիները, Յուշկապարիկ, Համբարու, Պարիկ, Պայ, Յարալէզ, Զաքք եւ Դեւք: Առաջին չորս ոգիներու վրայ ամենևին ծանօթութիւն չունինք թէ ինչ յատկութեանց տէր ոգիներ էին. հապա միայն անուններն են գտնուում մեր հին գրականութեան մէջ: Իսկ յարալէզի, քաջի և Կեի յատկութիւնք սրանք են: Մի նմանովի զրոյց առաջ է բերուած մեր ազգային պատմութեան մէջ, այս է որ, Նինուէի Չամիրամ անուն մի թագուհի, մեր Արայ գեղե-

ցիկ անուն նահապետներէ մէկուն զեղեցկամարդութեան զարնուելով, ուզել է իրեն ամուսին առնել, նա էլ արդէն իր սիրական կինն ունենալով, մերժել է դրա կամքը, այդ մերժման վրայ Ջամիրամ պատերազմ է տուել Արայ նահապետին, բայց նա սպանուելով ճակատամարտում հայր գրգուռում են իրանց նահապետի սպանման վրայ և նորէն պատերազմի են վեր կենում. Ջամիրամ նրանց կատաղութիւնը զսպելու համար ձայն է հանում թէ յարալէզ ոգիները լղելով լղվւտելով Արայի վէրքը առուջացուցել են: Նորէն Քրիստոսի չորրորդ դարում մի մեծատոհմ սպարապետ Մուշեղ Մամիկոնեան անուն, նշանաւոր պատերազմող մարդ, Արշակունի Վարազդատ անուն, հայոց թագաւորի կաթնեղբայր Բագ Սահարունու քսութեամբ, դաւադրութեամբ սպանում է նոյն թագաւորի սեղանի վրայ և գլուխը կտրւում. երբ սպանուածին մարմին իր տանն են տանում ընտանեացը մօտ, դրանք նրա մեռած լինելը հաւատալ չեն ուզում նրա ամենաբաջ պատերազմող լինելուն համար, թէ և նրա գլուխը մարմնէն զատուած է լինում, բայց ինչ են անում, դրա գլուխը բերում են ու մարմնի վրայ դնում և աշտարակի տանիքի վրայ կանգնեցնում, որպէս զի յարալէզները զան գիշերանց նրան կենդանացնեն լղելով, բայց իրանց յոյս պարապն է ելլում: Արդ՝ այդ զրոյցներէ իմանում ենք որ յարալէզ, որ երկու բառով է բարդուած՝ յար և լիզել, յար որ միշտ է նշանակում և լիզել, լղել, որոնցով յարալէզ նշանակում կըլինի մշտապէս լիզող: Այդ զրոյցներով կուզենք հաստատել թէ՛ քանի քանի հարիւր տարիներ այդ յարալէզ աստուծուն զօրութիւնը մնացել է մեր նախնի հայոց մէջ, բայց թէ ինչ կերպարանքով է դա՝ մեզ անյայտ է, հաւանօքէն շան կերպարանքով պէտք է որ եղած լինի: Քաջ բառին էլ հին նշանակութիւնը մեզ չատ յայտնի չէ, հապա ազգային պատմութեան մէջ առաջ բերուած

զրոյցներէ ենք իմանում: Հեթանոս հայոց Արշակունի թագաւորներէ մին, իր երկարատև աշխարհաշէն թագաւորութեամբ, շատ սիրելի լինելուն իր ազգին, նրա մեռած ժամանակ, ասում է զրոյցը, շատ մարդիկ իրանք իրանց ողջ ողջ նրա գերեզմանումն են թաղուում: Այդ բանի վրայ դրա մեծ որդին նեղանալով, ասում է իր մեռած հօրը. «Դու մեռար և ամենքը հետդ տարիր. ես այժմ մեռածների վրայ թագաւորեմ»: դրա հայրն էլ այդ յանդիմանութեան վրայ նեղսրտուելով, գերեզմանի մէջէն անիծում է իր ապերախտ որդուն այս խօսքերով. «Երբ դու ձիով ազատ Մասիս լեռան վրայ որսալու ելլես, քեզ քաջերդ յափշտակելով ազատ Մասիսի վրայ տանին, այնտեղ մնաս ու լոյս չտեսնես»: Յայտնի երևում է որ քաջ բառն այդ ռամկական երգումը ողի է նշանակում, քաջերը բարի ոգիներ էին, իսկ դեերը չար ոգիներ:

Մնում է խօսել մահեան, քաղին և քուրմ բառերու և դրանց բնութեան վրայ. մահեանին ինչ ծագում ունենալը չենք իմանում, այնքան գիտենք որ կուռքերու կամ աստուածներու տաճար է նշանակում, իսկ բազին բառին արմատն է քազ, բաղանդ կամ զէնդ լեզուի քազա բառէն ծագում առած, որն առհասարակ յատուկ անուններուն սկզբումն է գտնուում, ինչպէս քազարան, քազաւան, քազառինճ, քազնայր. «բագն» էլ նշանակում է «աստուած» ուստի և բազին «Աստուծու սեղան», որու վրայ անասուններ էին զոհում կամ նուէրներ դնում, միևնոյն բազ բառը և հին պարսից մէջ էլ ենք տեսնում նոյն նշանակութեամբ գործածուած, ինչպէս Բագիւս, Բագաւիատէս, Բագսուգէս, Բագաւիանէս:

Այդպէս, մահեան ու բազին բառերը զէնդ լեզուէ վեր առնուած տեսնելով մեր նախնի հայոցմէ, եզրակացնում ենք որ, ինչպէս հին հայոց կրօնը, այնպէս էլ հին պարսից կրօնը մի ակունքէ բխուած լինին, և գրեթէ իրա-

րու նման կրօն ունեցած լինին, միայն աշխարհներու դրու-
թեան և մարդկանց բնութեան առաջ բերած տարբերու-
թեամբ և հետեւեցնում ենք թէ այդ բանն էր գլխաւոր պատ-
ճառ հին պարսից անհնարին հակառակութեան հայոց բրիս-
տոնէութեան, որու մասին մի փոքր յետոյ պիտի խօսենք:

Այդ մեհաններու մէջ և բաղիններու առջև պաշ-
տօն մատուցանողները թէ տղայ մարդիկ էին լինում և
թէ կլինարմատ, տղայ մարդկանց քուրմ էին ասում, իսկ
կլին արմատներուն քրմուհի, դրանց ծագում անծանօթ
է. դեռ: Այս գիտենք որ Քրիստոսէ 2026 տարի առաջ հին
հայոց առաջին բուրմն եղողն է Հայկ նահապետի որդի Ար-
մենակ նահապետը, ապա Անուշաւան նահապետը ինչպէս
արդէն ասացինք, Դրանցմէ յետոյ Վահագն դիւցազնի
սերունդը, որ վեց հարիւր տարի բրմութեան պաշտօն
վարեցին: Տեսնում ենք որ նախնի հայոց քրմապետու-
թեան պաշտօնը նահապետութեան պաշտօն վարողի ցե-
ղէն են, նոյն բանն եղաւ և Արշակունեաց ժամանակ, Ե-
րուանդ թագաւորի եղբայր Երուազ քրմապետ եղաւ
Քրիստոսի 58 թուին, իսկ Արտաշէս թագաւորը Քրիստո-
սի 78 թուից իր Մաթան որդուն քրմապետ կարգեց Անի
ամրոցի Արամազդայ մեհենին:

Մեծարեւի ունկնդիրը, մի գաղափար ունենալ հե-
թանոս Հայաստանի քրմերու վիճակին և որպիսութեան
վրայ, ճիշտն ասելով, մեծ արժողութիւն ունի: Դրանք
թէ և հին և մեծ տոհմերէ էին և տանուտէրներու ու նա-
հապետներու դասակարգէն և իրանց երկիրներում բա-
ցարձակ իշխանութիւն վարում, բայց թագաւորներու իշ-
խանութենէն ունէին կախում, նրան որոշուած տուրք և
պատերազմի ժամանակ էլ զօրք էին տալի: Այդ այդպէս
լինելը Արշակունի թագաւորներու ժամանակ շատ յայտ-
նի է: Այդ քրմերը կամ քրմապետները պատերազմի ժա-
մանակ զօրք էին ժողովում և դրանց առաջն անցնելով

փող ու թմբուկ ածել տալով թշնամու վրայ էին յարձա-
 կում։ Այդ տեսակ պատերազմներ երևում են մեր աղգա-
 յին պատմութեան մէջ քրիստոնէութիւնը հեթանոսու-
 թեան հետ կռուի բռնուելիս։ Այդ այդպէս, հապա դը-
 րանց հարստութեան մեծութիւնը մեր զարմանքն է տա-
 նում, դրանց հարստութիւնն է լինում բարեբեր հոյե-
 ըու տէր լինել, իրանց երկիրներու բազմամարդութիւնը
 և ընտանի անասուններու շատութիւնը։ Մեր պատմա-
 գրերէն մին, Տարօն գաւառի հնդիկ քրմերու հարստու-
 թեան մասին այսպէս է խօսում։ Դրանց ձեռին շատ
 գիւղեր կային։ Տում գիւղը 900 տուն և 400 ձիաւոր,
 Խորնէ, 1906 տուն, 100 ձիաւոր և 1007 հետեակ։ Բրեխ
 1680 տուն, 1080 ձիաւոր և 200 հետեակ, Բաղու 3200
 տուն, 1040 ձիաւոր, 840 նետաձիգ, 680 նիզակաւոր և
 200 պարսաւոր։ Գէրք, 1600 տուն, 800 ձիաւոր, 600
 հետեակ։ դրանց անասուններուն արածելու տեղն ամ-
 բողջ Հաշտենից գաւառն է եղել։ Նոյն Տարօն գաւառում
 Աշտիշատ քաղաքն իր շրջակայ երկիրներով, ուր էին
 Վահագնի, Մնահտայ և Աստղկան մահեանները՝ Վահու-
 նեաց քրմերունն էր։ Այդ քրմերուն կամ քրմապետներուն
 շափաղանց հարստութիւնն իմանում ենք նաև յետագայ
 իրողութենէն։ Արշակունի Արտաշէս թագաւորի սպարա-
 պետը Սմբատ՝ երբ Երուանդին յաղթում է որ զահակոր-
 դիչ էր, Բաղարան է մտնում և զրա եղբօր Երուազ քըր-
 մապետին մեռցնելով, նրա ամբողջ գանձն առնում է, ո-
 րը յետոյ Արտաշէս թագաւորը պարսից Դարեհ թագա-
 ւորին ընծայ է զրկում։ Սակայն հեթանոս հայոց քրմա-
 պետները այդ հարստութեան հետ միասին ուսմունք,
 գալութիւն և իմաստութիւն էլ ունին եղել։ Դրանք էին
 իրանց հայրենի աշխարհին քաղաքական և աշխարհային
 խորհուրդներուն տեղեակ մարդիկ, դրանք էին աշխար-
 հային և կրօնական մեծ դէպքերու տարեգրութիւնը ա-

նողները, որոնք մեհենական պատմութիւն էին կոչուում: Անի ամրոցին Ողիուպ բուրմը դրանց մէջ երևելիներէն մին է. մեհեններում դիւանատներ էլ կային, այդ դիւաններէ ամենամեծը Անի ամրոցումն էր, որտեղ Բարտէզան Կնոստիկեանը Քրիստոսի երկրորդ դարուն պատմական յիշատագրերն է կարդում և երկու հատոր գրքեր է շինում, բայց մեր ձեռին չեն հասած այդ գրեանք:

Այսքանը բաւական եմ համարում, իմ մեծարելի ունկնդիրը, հայոց հեթանոսութեան վրայ խօսելը, այդքան էլ որ խօսեցայ այն նպատակով էր, որ ցոյց տամ իմ ունկնդիրներուն թէ սուրբ գիրքը, կամ թէ բրիստոնէութիւնը ինչ բաղմադարեան և ամենախորը արմատներ ձգած հեթանոսական կրօնի հետ, մաքառեց և յաղթահարեց մեր հայրենի աշխարհում, հայաստանեայց երկրում:

ՀԱՅՈՑ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹԻՒՆԸ

Երբ Քրիստոսի տասներկու առաքեալները վերնատան մէջ սուրբ հոգին ընդունում են, նոյն սուրբ հոգու ազդումով իրանց մէջն են բաժանում իճակով իրանց ժամանակի ծանօթ աշխարհի բոլոր ազգերն ու լեզուները ու գնում են քարոզել դրանց իրանց վարդապետ Քրիստոսի հրամանով. հայոց աշխարհն ու ազգը վիճակով ընկնում է Թադէոս առաքելուն, որ էր տասներկու առաքելոցմէ մին և որը Ղէբէոս և Յուդայ էլ է կոչուում աւետարանիչներէ: Այդ Թադէոս առաքեալն իր հետն է առնում եօթանասուն աշակերտներէն Նղիշէ և Ստաթէոս անուն առաքեալները և գալիս է Երուսաղէմէ, ծովեզրով, նախ Կիլիկիա և ապա Առաջին հայաստան, որտեղ քարոզելով, Քրիստոսի եկեղեցուն առաջին հիմքն է դնում և այդտեղ Թէոփիլոս անուն մին եպիսկոպոս է ձեռնադրում: Այդ տեղից Եփրատ գետով անցնելով, Եդեսիա է գնում, որտեղ մկրտում է հայոց Աբգար անուն

Թագաւորը, և նոյն քաղըում, որ էր մայրաքաղաք այդ ժամանակ Հայաստանի, քրիստոնէութիւնն է քարոզում, եկեղեցի հաստատում և եպիսկոպոս է ձեռնադրում Ադդէ անուն կերպասագործին: Ապա գնում է Արտաղ գաւառ Սանատրուկ անուն հայոց Թագաւորի մօտ, որտեղ էլ քարոզութիւն անելիս նահատակւում է Քրիստոսի 40 թուականին: Դրա նահատակուելէն յետոյ, իր աշակերտը Ստաթէ հայոց աշխարհի հիւսիսակողմ Սիւնեաց երկիր է գընում, այդտեղ քարոզում է և նահատակւում. իսկ միւս աշակերտը Նդիշէ ետ է դառնում Նրուսաղէմ Յակոբ առաքելու մօտ, որ մեր Թագէոս առաքելու եղբայրն էր և պատմում նրան իր եղբօրը սպանումը: Յակոբ առաքեալը նոյն այդ Նդիշէին եպիսկոպոս է ձեռնադրում և նորէն ետ ուղարկում հայոց աշխարհ, դա Սիւնեաց և Աղուանից աշխարհներում քարոզութիւն անելուց յետոյ սպանւում է Աղուաններէ: Նոյնպէս Բարդուղիմէոս առաքեալն էլ հայոց աշխարհում քարոզում է Քրիստոսի երկնքի արքայութիւնը և Թագէոս առաքելու հետ հանդիպելուց յետոյ մարտիրոս է լինում Հայաստանում. այդ պատճառով դրանք Հայաստան աշխարհի առաքեալներ և առաջին լուսաւորիչներ են կոչւում հայոցմէ:

Արդ, տեսնենք այժմ, մեծարելի ունկնդիրք, այդ առաքեալք ինչ քրիստոնէական վարդապետութիւն քարոզեցին և ինչ արդիւնք ունեցան: Իրաւ է որ դրանց ժամանակակից վկայութիւնք այնքան նուազ են և մեր ձեռք հասած ստոյգ աղբիւրներն էլ այնքան սակաւ են, որ մենք աւանդութեամբ գրաւոր զրոյցներու մէջ անցածները միայն գիտենք: Այդ բանի պատճառը, կարծում ենք որ հաւատի եկողներուն գիր գրել չգիտենալը լինի կամ թէ դրանք անգրական մարդիկ եղած լինին և միայն Քրիստոսի խօսքերը բերանացի տարածելու զբաղած, անվոյթ լինին իրանց նոր հաւատքին տարեգրութիւնքը սարքելու,

կամ թէ այդ հին կրօնաջնջման և նոր կրօնատարածման ժամանակ տեղի ունեցած դէպքերու և գրաւոր յիշատակարաններու մեծ մասը, այդ առաքելական ժամանակներուն վերաբերող, կորած ու փչացած լինին ցաւալի արկածներով:

Առաջին քրիստոնեայ եղողներն են Հայաստանում Արշակունեաց տնէն մի քանի իշխաններ, հրէից ազգէն, որ մի մեծ գաղթականութիւն կար Հայաստանում շատ դարերէ հետէ, շատ մեծատոհմ մարդիկ, որոնք արդէն ծանօթ էին առաքելոց թէ լեզուն և թէ վարդապետութեան. ապա հռովմայեցոցմէ մի քանի ազնուական մարդիկ, որոնք ղեկավարութեան պաշտօնով Հայաստան էին եկած. դրանք իրանց մեծի՝ Դորոուսի անունով Խրուսեանք կամ Ոսկեանք են կոչուում և մեր երկրում մնալով իրանք էլ սկսում են քրիստոնէութիւն քարոզել, ապա Ալանաց ցեղէն Սուքիասեանք, Սանատրուկի Սանդուխտ աղջիկը, Սամէլ նախարարն իր Զարմանդուխտ տիկնոջ հետ, դրանց պէս ուրիշ շատեր: Նկատելի մի բան որ կայ մեր քրիստոնէութեան պատմութեան մէջ, այս է որ, այդ կրօնը ցածրէն դէպի բարձր չէ գնում, հապա բարձրէն դէպի ցածրն է իջնում: Առաջին հաւատացեալք մեր աշխարհում թագաւորներ և թագաւորազունք են լինում:

Մեր աշխարհի առաքեալներու քարոզած քրիստոնէութիւնն անշուշտ այն պիտի լինէր, ինչ որ Յակոբ, Պետրոս, Պողոս և միւս առաքեալները քարոզեցին իրանց թղթերով, օրինակի համար, առաքելոց ժամանակ քրիստոնեայ մկրտուելու համար, հերիք էր որ քրիստոնեայ լինողը խնդրէր այս և այդ նշան էր նրա քրիստոնէանալուն, մկրտութեան հրահանգը շատ անգամ նրա հաւատքի գալէն յետոյ էր լինում և մկրտութիւնն էլ յանուն Յիսուսի էր լինում: Յետոյ է որ Մատթէոս աւետարանչի վերջին տներում Յիսուսի առաքելոց տուած այս յետա-

գայ պատուէրը. «գնացէր այսուհետեւ աշակերտեցէր դամենայն հեթանոսս, մկրտեցէր զնոսա յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ» նկատի առնուելով յարմար է երևում մկրտութեան ժամանակ յիշել այդ խօսքեր ցոյց տալու համար, որ այդ խորհուրդը կատարելով թէ մկրտողը և թէ մկրտուողը Յիսուս Քրիստոսին հնազանդին և այդ յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ նշանակում էր որ քրիստոսեայ լինող անձն ինքն իրան՝ Տէր Աստուծոյ և նրա որդուն Յիսուսի Քրիստոսի էր նուիրում և միևնոյն ժամանակ նա ոգևորւում էր ու կենդանանում Քրիստոսի հոգւով, Աստուծոյ շնորհքով և քրիստոնէական զգացմունքով: Եանուն Հօր նշանակում էր նոյն իսկ ճշմարտութիւնը, այն է բացարձակ կրօնը. և Որդւոյ նշանակում էր բացարձակ ճշմարտութենէն մարդկային ազգի պատմութեան մէջ անցած ու մտած կրօնը, այն է ճշմարտութիւնը մարդկանց ցոյց տրուած, սորվեցուցած ու յայտնուած Յիսուսի Քրիստոսի՝ ձեռքով. իսկ Հոգւոյն սրբոյ, նշանակում էր այդ նոր կրօնը մարդկանց վարքին ու բարքին մէջ բնաւորեցնել հոգւով բնորոշել տալով նրանց և ըստ այնմ կեանք վարել տալ նրանց: Մի խօսքով աստուածային տիրապետութիւն մարդուս հոգու վրայ քրիստոնէութեան ձեռքով, այն է Աստուծոյ արքայութիւնը մարդկանց սրտերում:

Այդ էր, թէ որ չեմ սխալւում, մեծարելի ունկընդիրք, իր նախնական պարզութեամբ և իր իսկական նշանակութեամբ մեր նախադարեան հայոց քրիստոնէութիւն, որը տարուէ տարի և դարէդար զարգանալով երևաց մեր Գրիգոր Լուսաւորչի վարդապետութեանց մէջ և որը հպարտութեամբ կարող եմ պարծենալ, որ հայոց աշխարհն ու ազգը այդ հոգին, այդ կեանքն ու բարքը ցոյց տուաւ մեր դարևոր պատմութեան մէջ թէ զրադաշտականներէն հալածուելիս, թէ մահմեդականներէ

չարչարուելիս և թէ այս վերջին դարերումն էլ բուզան-
դականաց և հռովմէականաց ձեռնձգութենէ բաշած նե-
ղութեանց մէջ, ինչպէս որ պիտի տեսնենք այս ճառա-
դրութեանս ընթացքում:

Տարակոյս չկայ որ, Ա. Բ. և Գ. դարերում հայաստան
աշխարհի մէջ քրիստոնեայք շատ էին բազմացել թէ
քնիկներով և թէ եկովկներով, այն աստիճան որ արդէն
Գ. դարու կիսում այդ քրիստոնեայ ժողովուրդը հայոց
հեթանոս թաղաւորներու ուշադրութիւնն իր վրայ է
դարձնում և մի բանի անգամ էլ հալածանք է կրում.
մանաւանդ այն ժամանակ երբ իրանց մէջ կարգ կանոն
արարողութիւնք և պաշտամունք են հաստատուում, ինչպէս
ծումապահութիւն կամ զգուշութիւն հեթանոսական ու-
տելիքէ, կիրակի օրերուն սուրբ պահպանութիւնը, ե-
րէցներու և տեսուչներու հաստատութիւնը, հաղորդու-
թեան և մկրտութեան խորհուրդները, պտղին, դատիկ և
զառնուկի զենումը և այլն:

Այդ երեք դարերն են հայկական քրիստոնէութեան
պատմութեան նախնական ժամանակը, որուն յաջորդում
է մի երկրորդական ժամանակ Գրիգոր Պարթևի ձեռքով,
որ սնուած ու զարգացած լինելով բոլորովին քրիստո-
նէական հոգեով և իր քրիստոսանման համբերութեամբ
իրան տրուած ամեն չար տանջանքները կրելէն յետոյ,
դրեթէ հրաշալի կերպով ազատում է Քրիստոսի եկեղի-
ցին հայոց. թաղաւորներու հալածանքէն և անում է այն
բուն տեղական ունազգային եկեղեցի հայաստանցոց համար:

Այդ Գրիգոր Պարթևը, որուն հայք լուսաւորիչ են
կոչում իրանց Քրիստոսի լուսովը լուսաւորելուն համար,
երրորդ դարու վերջերում եպիսկոպոս է ձեռնադրուում
Գեսարիոյ եպիսկոպոսէն և վիճակում է առաքելական
պաշտօն կատարել հայոց աշխարհի մէջ, ամեն կողմերում
եկեղեցիք ու դպրեվանքեր հիմնելով և դրանց վրայ տե-

սուչներ ու հրահանգիչներ կարգելով: Քրիստոնէութիւնն ամեն տեղ տարածելու համար, ինչպէս պատմութիւնն էլ է վկայում, դա թէի իր վարդապետինման ամենեւին ստիպում չէ անում և բռնի հաստատել չէ կամենում քրիստոնէութիւնը, հապա միայն սուրբ բանին բարոգութեամբ, սակայն նորադարձ քրիստոնեաներու և հնացած հեթանոսներու միջին կռիւ է բացում, նախ Տարօն գաւառում Գիսանէի և Դեմետրի բրմապետներու հետ, ապա զանազան նահանգներում նախարարներու հետ, այն պատճառով որ եպիսկոպոսական իշխանութիւնը հանդիպում է նախարարական իշխանութեան. թէի նախարարը իրանց հեթանոս կրօնքը փոխած են լինում քրիստոնէութեան հետ, բայց իրանց հեթանոսական բնոյթը քրիստոնէական հոգւոյն հետ փոխած չեն լինում, այդ պատճառով Գրիգոր Պարթևի վերահաստատած Քրիստոսի եկեղեցին պատահում է մեծ դիմագրութեան, ոչ թէ մտաւորական կամ գրականական, հապա բարուց և սովորութեանց: Դժբաղդաբար քրիստոնէութեան գործածած բարբառն էլ ասորերէն և յունարէն լինելով, աւետարանական բարոգութիւնը մտքերու և սրտերու մէջ հեշտութեամբ չեն ներգործում, բայց և այնպէս Մեծ Հայքը, Ալանաց աշխարհը, Վրաց աշխարհը և Աղուանք չորրորդ դարում քրիստոնէանում են և եկեղեցիք են կազմում, այս ինքն ինքնուրոյն, որոնք ոչ Պօլսոյ և ոչ էլ Անտիոքայ եպիսկոպոսներէ կախում են ունենում:

Թէի Գրիգոր Պարթևին տրւում է մի գրական գործ և դրա վարդապետական բարոգութիւնը գրի են առնուած յետագայ դարերում, բայց մեղ յայտնի է և ստոյգ որ նա Նիկիոյ հանգանակը ստանալուց յետոյ իր Արիստակէս որդու ձեռքով, այս յետագայ դաւանութիւնն է աւելացնում. «Իսկ մեր, ասում է նա, փառաւորեսցուք որ յառաջ բան գլաւիտեանս երկիր պապանելով սրբոյ երրոր-

գութեան և միոյ աստուածութեան հօր և որդւոյ և հօգւոյն սրբոյ այժմ և յաւիտեանս յաւիտենից»:

Հայաստանեայց եկեղեցու եպիսկոպոսապետութեան աթոռը ժառանգում են Գրիգոր Պարթևի որդիքն ու թոռունքը, որոնց մէջ նշանաւոր է Ներսէս պարթևը, որ Մեծն է կոչուած իր մեծամեծ քրիստոնէական գործերով և առաջին անգամ ս. Եփրեմի նման Հայաստանում աղքատանոցներ և դարմանատներ հաստատելով և Սահակ Պարթևն. որու հայրապետութեան ժամանակ Ե դարու սկզբում Տարօնեցի Մեսրոպ անուն վարդապետը Հայոց տառերը կազմելով հաստատում է թարգմանիչներու դպրոցը և թարգմանում ս. Գիրքը յունարէնէ բաղդատութեամբ ասորականին հետ. այնուպետոյ քրիստոնէութիւնը հայոց աշխարհում հրաշալի կերպով ծաւալում է ստանում և շատ խորն արմատներ է ձգում երկրին մէջ և կարողանում զբաղաշտի զէնդ աւետարի կրօնքին հետ մաքառել հարիւր տարիէ աւելի շարունակ:

Մի նշանաւոր պատմագիր, Ղազար Փարպեցի, այսպէս է նկարագրում ս. Գրքի թարգմանութիւն հայոց մէջ տարածուելու ժամանակ.

«Եւ տարեալ ի գլուխ սուրբ հայրապետին հայոց Սահակայ զգործ մեծ հոգևոր վաստակոցն, կարգեցան վաղվաղակի յայնմհետէ դպրոցք հօտին ուսմանց. բազմացան դասք գրչաց ելևելս առնելով զմիմեամբք. զարդարեցան պաշտամունք սուրբ եկեղեցւոյ, յորդորեցան բազմութիւնք արանց և կանանց ժողովրդոց ի տօնս Փրկչին և ի ժողովս մարտիրոսաց որ շահեալք լի հոգևոր օգտիւ, ընթանային խնդալիցք և հաղորդմանէ մեծ խորհրդոյն, արձակեալք իւրաքանչիւր ի տունս մեծամեծք և տղայք. սաղմոսելով և կցորդս ասելով ընդ ամենայն տեղիս ի հրապարակս և ի փողոցս, և առտնին, պայծառացան եկեղեցիք. շուք առին վկայարանք սրճոց, միշտ ծաղկե-

լով ի նոսա ուխտ կտակարանաց ընծայիւք, հանապա-
զարուլիս հոսէին վտակք յասողաց մեկնութեանց, որք զծա-
ծուկս մարգարէիցն բերելով ի յայտնութիւն, սեղանս
ամենալիցս հոգևոր խորտիօք ղնէին առաջի ամենայն
ժողովրդեան, յորոց ճաշակեալ իմաստախնդիր մարդոց,
քաղցրանայ ի բիմա նոցա. ըստ բանի սաղմոսերգին, բանք
վարդապետութեան բան ղխորիսի մեղու. և զի միան-
գամայն իսկ ասացից ըստ բանի սուրբ մարգարէին Նա-
յեայ, [Թէ լցաւ երկիրս ամենայն հայոց զիտութեամբ տեա-
ռն ի հոգևոր վտակաց սուրբ հայրապետին Սահակայ,
իբրև զշուրս բազումս որ ծածկեն զծովսս»

Այդ գրուածքին մէջ ոչ [Թէ միայն սուրբ Գրոց ծա-
ւալումն ենք տեսնում հայոց աշխարհում, հապա նաեւ
հինգերորդ դարու հայաստանեայց եկեղեցու պաշտամանց
կիրառութիւնր. Արեւո նման յայտնի է, որ Գրիգոր Պար-
թևի քարոզած բրիստոնէութիւն հայաստանում վերջին
աստիճան պարզ էր և անխառն որ և է անհասկանալի
և անըմբռնելի վարդապետութեանցմէ, սրոնք իրմէ յե-
տոյ եկող դարերում մտան բրիստոնէական վարդապե-
տութեան մէջ. օրինակի համար, քաջ գիտենք, որ նրա
վարդապետած բրիստոնէական պաշտաման մէջ, դեռ մա-
րեմապաշտութիւն կար ոչ և չէր կարող լինել, վասն զի
մէկ ու կէս դար յետոյ Նփեսոսի ժողովքում վճռուեց
Մարիամու աստուածածին կին լինելը, հետևաբար և պաշ-
տելի. նմանապէս սրբերու միջնորդութեան երկնքի և եր-
կրի միջին կամ [Թէ նրանց քաղցրաստութեան վարդա-
պետութիւնը նրանց մարդկանց պաշտպան կամ քաղաք-
ներու պահապան լինելու դաւանութիւնը Գ. դարու
վերջերումն է ընդունուած. նոյնպէս հոգւոյն սրբոյ բըղ-
խումը և յորդույ դաւանութիւնը և քաւարանի վարդապե-
տութիւնը Զ. դարումն է ընդունուած լատինական եկե-
ղեցուց. ինչպէս նաեւ Յիսուսի ղժոխք իջնելու վարդա-

պետութիւնն, որ առաջին անգամ արիոսականաց հանդանակումն է երեցած 357 թուին, յետոյ է որ մտած է լատինականէն և այս վերջին դարերումն էլ հայոց մէջ, իսկ պատկերապաշտութիւն երկար ժամանակ հայոց եկեղեցում մուտ չէ գտել, ուր մնաց որ Գրիգոր Պարթևի վարդապետութեան մէջ եղած լինէր. բայց զիտհնր, որ 306 թուերուն էլ վերայում եղած ժողովրդում պաշտօնապէս դատաւարտուեց վճռելով իր 36-րդ կանոնով թէ ոչ մի պատկեր չընդունուի եկեղեցիում և ինչ որ է պաշտաման առարկայ երբէք պատերու վրայ նկարուած չլինիցոյց անելու համար. Բայց ինչպէս նշխարապաշտութիւնը, այնպէս էլ պատկերապաշտութիւն Զ. դարումն է մուտ գտած արևմտեան եկեղեցու մէջ նախ պատմական պատկերներով, ապա պաշտելի. Իսկ հայոց մէջ այս մեր վերջին դարերում օծելով պատկերները:

Սակայն Թ. դարում արդէն քրիստոնեաներու մէջ սովորութիւն ընդունուած էր իրենց ննջեցելոց գերեզմանին վրայ տարէնր մի անգամ հաւարուել նրանց յիշատակին հաղորդութեան հանդէսը կատարելու և նրանց մասին աղօթք անելու նրանց դաւանութիւն ու մարտիրոսութիւն կարգալով. Այդ էր որ Արիստակէս եպիսկոպոսապետը Գրիգոր Պարթևի որդին հաստատեց հայաստանում երբ զրապաշտականաց դէմ մղուած պատերազմում մի քանի քրիստոնեայ նախարարներ մարտիրոս եղան. Իսկ Բարսեղ Գեսարացին, Գրիգոր Նիւսացին, Գրիգոր Նազիանցին, Ոսկերեքան, Օգոստինոս և Հերոնիմոս և ուրիշ շատ հայրապետներ, որոնք ընդունած են սրբերու կամ մարտիրոսներու միջնորդութիւնն ու ուրիշ վարդապետութիւնը, բոլորն էլ մեր Գրիգոր պարթևէն յետոյ են. Պատարագամատոյցը շինած են Բարսեղ Գեսարացին ու Ոսկերեքան. Ականջալուր խոստովանութիւնն էլ հաստատած է արևմտեան եկեղեցիում է դարու վերջին կիսումը, վերջին

դարերումն է որ երբ կղերականք իրանք իրանց եկեղեցի էին համարած հայոց մէջ է մտած այդ սովորութիւն։ Իսկ եկեղեցականաց համար ամուրիութիւն բնաւ ամենին չէ քարոզած Գրիգոր Պարթև. վասնզի ինքն էլ և որդիքն էլ ամուսնացած էին. թէև այդ մասին Նիկիոյ ժողովրում խնդիր է եղած և քիչ է մնացել որ եկեղեցականաց ամուրիութիւնը վճռուի և մինչև անգամ կին ունեցողներուն բաժնիկ տալով իրանց կանանցմէ. թէ որ մի ծերունի և միանգամայն ամուրի Պամինապիոս անուն Տէրայիղի եպիսկոպոսի ճարտարախօսութեամբ այդ աւետարանական ազատականութիւնը չպաշտպանուէր. հետեաբար հայոց աշխարհը Քրիստոսի լուսով լուսաւորող Գրիգոր Պարթևէն մինչև այդ բրիստոնէական լուսաւորութիւն մտաւորապէս և գրականապէս ծաւալող և հաստատող Սահակ Պարթև և Մեսրոպ Մաշտոց և իրանց թարգմանիչ աշակերտները, Յովսէփ, Ղևոն, Երեցնիք, Նզնիկ և Կորին, Մուշէ և Տիրայր, Արձան և Աղան և այլն և աշակերտներուն աշակերտները Մովսէս, Մամբրէ, Դաւիթ, Գիւտ, Յովհան, Նզիշէ և այլն, որ ամբողջ մի դար է տևում ճիշտ, կարող ենք հաստատել թէ որ աստիճան պարզ էին և պէտք էին որ լինին բրիստոնէական պաշտամունք չայատանում, թէև յետագայ տարեգրեր մեզ աւանդում են թէ Գրիգոր Պարթև մի քանի հեթանոսական տօներ բրիստոնէացուցել է. բայց դա այնքան չէ, որքան Ներսէս պարթև Կ. Պօլիս գնալուց ու դառնալուց յետոյ Դ. դարու կիսում. ինչպէս նոր նոր վարդապետութիւնը, այնպէս էլ նոր նոր կարգեր ու սարքեր բերած Յունաստանէն և հաստատած ունի հայաստանում ըստ Բուզանդայ Փաւստոսի։ Աւելի ընդարձակ աստիճանի վրայ կերպարանաւորութիւն է ստանում հայաստանեայց եկեղեցին, երբ Սահակայ և Մեսրոպայ աշակերտներ խմբովին Յունաստան են գնում յունական դպրութիւնը սորվելու և յիրաւի քաջ սովորում

են և դարձ են անում Հայաստան, բայց ինչպէս քրիստոնէական հիանալի գրականութիւնը, նոյնպէս և Դ դարու եկեղեցւոյ մէջ մուտ գտած ամեն նոր վարդապետութիւնն ու պաշտամունքը բերում են իրանց հետ և ծաւալում հայոց մէջ: Ա. և Բ. կարգի թարգմանիչը Դ. դարու գրեթէ բոլոր Արևելեան եկեղեցու գրական մարդկանց գրքերը թարգմանում են ու տարածում հայոց մէջ: Իրաւ որ յունական եկեղեցւոյ հայրապետները արիաստուութեամբ, խոտամբերու թեամբ և հաւաքով են փայլում, բայց և այնպէս իմաստասիրութեամբ, ուսումնասիրութեամբ էլ են փայլում, դրանց հանճարում ազատականութիւն և հոգիներում վեհականութիւն լինելով մերինները այդ ընտիր յատկութեանցմէ մեծ օգուտ են բաղում, ինչպէս տեսնում ենք միևնոյն յատկութիւնը մեր Նզնիկներու, Նղիշներու, Ղևոնդ երեցներու և այլոց մէջ Ե. դարու առաջին կիսուն մէջ: Տեսնում ենք արդէն մարեմապաշտութիւն, նշխարապաշտութիւն, հրաշքների հաւատ ընծայում, մի խօսքով ինչ վարդապետութիւն և պաշտամունք որ յունական եկեղեցին իբրև ուղղափառութիւն համարելով ընդունած է լինում, քիչ շատ լարեփոխուած և ձևի բերած մուտ է գտնում Հայաստանեայց եկեղեցում, Բարսեղի, Նփրեմի, Գիւրգի, Ոսկերեւանի և ուրիշ յոյն և ասորի հարց գրքերու թարգմանութեամբ:

Այդ երրորդ կերպարանաւորութիւն հայոց եկեղեցու մեր թարգմանիչ հարց ձեռքով կանգ է առնում 451 թուի մեծ պատերազմին հայոց քրիստոնէութեան և պարսկց կրակապաշտութեան հետ, որ ժամանակ պատահում է Քաղկեդոնի ժողովքը, որը հայր չեն ընդունում, ոչ թէ այդ ժողովքում հրաւիրուած չլինելուն կամ թէ իրանց երեսփոխան այնտեղ չունենալուն, ինչպէս առ հասարակ կարծւում է, վասնզի Կ. Պօլսոյ առաջին ժողովքին մէջ էլ հաջր երեսփոխան չունէին, ինչպէս նաև Նփեսոսի ժո-

դովբումն էլ, հապա ամենայն հաւանականութեամբ հայր սկսել էին յունական բրիստոնէութեան վրայ մի բան տեսնել, որն իրանց հաճելի չէր թւում. այդ բանն էր Քրիստոսի եկեղեցին հռովմէական տիրապետութեան մի պաշտօնական կարգի ու սարքի տեղ բան համարել, ապացոյց որ Թէոդոս փոքրի ժամանակ հայր, որ իբրեւ բրիստոնեայ ջարդ ու փշուր էին լինում զրադաշտականացմէ, ամենափոքր օգնութիւնը, ոչ կառավարութիւն արաւ իրանց և ոչ էլ իր բրիստոնեայ ժողովուրդը, նախ իրանց պարսկցմէ ունեցած ահուց, երկրորդ ամեն աշխարհային ու բաղադական խնդիր, բարձի թողի արած և կրօնական վէճերով զբաղած, իրանք իրանց իշխողամոլութեան էին տուած և ուրիշ շատ պատճառներ, որ աւելորդ եմ համարում այստեղ առաջ բերելը արդէն ծանօթ բաներ լինելուն դրանք կրօնական առարկայով զբաղող մարդկանց:

Այդ երրորդ կերպարանաւորութիւն Հայաստանեայց եկեղեցու տւում է մինչև Բիւզանդիոնի Հերակլ կայսրը, այսինքն հինգերորդ դարու սկիզբներէն մինչև եօթներորդ դարու կէսը, որի ժամանակ այդ Հերակլ կայսրը աշխատում է և յաջողում մեր կաթողիկոսներէն միուն, Եղբ անուն, Քաղկեդոնի ժողովքն ընդունել տալ մի աղի հանք իր գիւղովը վարձ առնով նրան: Այդ Եղբ անուն կաթողիկոսն ու իր նմանները հայոց պատմութեան մէջ նախատուած են իրանց այդ արարքին համար, որոնք յետոյ պիտի տեսնենք: Այդ Հերակլ կայսրն ինքն անձամբ Հայաստան է գալի, ժողովք է սարքում և բռնի կամ բանսարկութեամբ ընդունել է տալի Քաղկեդոնի ժողովքն այդ Եղբ կաթողիկոսին, ինչպէս բռնի ընդունել էին տուած իր նախորդներն այն հայոց, որոնք իրանց տիրապետութեան ներքեւ էին Փոքր Հայքում: Այդ ժամանակ Հայաստանում դպրեմանքերը քաղմածիւ են լինում, նոյնպէս այդ դպրեմանքերում աշխատող գրական մարդիկ,

որոնց դրեթէ ամենքն էլ եկեղեցական կարգէն են լինում. եկեղեցական գրականութիւն միմիայն իրանց գրադմունք լինելով բանաստեղծօրէն և շատ հաւանական է հեթանոս բանաստեղծութեան հետեութեամբ, շատ ընտիր ու ազնիւ քերթուածներ են նուիրած Հայաստան աշխարհի քրիստոնէութեան ազատութեան համար արիւն թափող մարտիրոսներուն. նմանապէս հինգերորդ դարու թարգմանիչներու գրական գործերու ընդօրինակութիւնք են կատարած. բայց ինչպէս երևում է քննաբաններուն ընդօրինակողները շատ անգամ իրանց դարու կամ ժամանակի կրօնական գաղափարները տուած են լինում իրանց դարէն առաջընթաց դարերու գրուածքներու, այդ տեսակէն է Աղաթանգեղի պատմութիւնը, որը Տրդատայ դարձի և Գրիգոր Պարթևի քարոզութեան պատմութիւնն է պարունակում իր մէջ. Ինչպէս վերևը յիշեցինք, այդ կերպարանաւորութիւնն էլ չորրորդն է լինում Հայաստանեայց եկեղեցու պաշտամանց և արարողութեանց մասին, թէև իմաստուն կաթողիկոսներու և առարինի եպիսկոպոսներու ձեռքով պարզուում են և հետզհետէ բաց թողնում յունական ծիսակատարութիւնք. բայց և այնպէս Հայաստանի յունական մասումը մինչև տասնըմէկերորդ դարը մնացորդներ թողնում են. Այդ չորրորդ կերպարանաւորութիւն տւում է մինչև տասներկու, տասներեքերորդ դար, ճիշտ այն ժամանակներ, երբ ազգային իշխանութիւնք բոլորովին նուազում են մեր հայրենի երկրում և մահմեդական ժողովրդներու իշխանութիւնը գործնում է. մեր եպիսկոպոսներն էլ ազատ մնալով իրանց համակրօն իշխաններու հովանաւորութենէն և հսկողութենէն, պատիւ և պատկառանք տեսնելով այդ խորամանկ տարագգի իշխաններէ իրանց փառասիրութիւն գրգռում է, ու լինում են պատրիարք միտրապօլիտ ամեն իշխանաբնակ բաղաքներում յունաց հետևողութեամբ.

այնպէս որ մի ժամանակ մինչև երեք չորս եկեղեցական պետեր են գտնուում Հայաստանեայց եկեղեցու մէջ. ժողովուրդն էլ շարունակ պատերազմի հարուածներու ներքև ընկճուելով ստրկանում է ու մոռանում իր անցեալը, ինքն որ առաջ պաշտպան էր և հսկող եպիսկոպոսներուն, եկեղեցիներուն և դպրեմանքերուն այդ ժամանակներում եպիսկոպոսներու ու դպրեմանքերու պաշտպանութեան ներքև է մտնում, որպէս զի նախ՝ իր հարց կրօնը չկորցնէ, երկրորդ մահմեդական իշխանութիւնք կրօնական լինելով, իրանց իշխած աղգաց կրօնական իշխանութիւն օրինական են համարում, հետևաբար նանրահաւատութիւնն էլ այնքան աւելանում է, որքան որ չարիք, թշուառութիւնք, հիւանդութիւնք, երկրաշարժներ, սով, սրածութիւն կրկնուում են. բայց և այնպէս այդ դպրեմանքերը սուրբ գրոց օրինակներով լրջնում են հայոց աշխարհ, այսօր մեր երկրում և ազգսւմամեն ձևով մեծ ու փոքր, պատկերազարդ ու մանրատառ կամ երկաթազիր գրչազիր սուրբ գրքեր գտնուում են այն աստիճան որ, կարող ենք ասել, թէ հայ քրիստոնեայ մարդ հազիւ էր գտնուում այդ դարերում և մինչև այսօր, որ մի որևէ սուրբ գիրք չունենայ իրան կամ ընտանիքին յատուկ գրչազիր: Բայց միևնոյն ժամանակ էլ հրաշապաշտութիւնը, խաչապաշտութիւնը, ուխտադնացութիւնը, ծոմապահութիւնը, պահքը, աղօթարարութիւն, անհատնում նուիրատուութիւնը եկեղեցիներուն, դպրեմանքերուն, հոգիներուն փրկութեան համար ու կրկին կրկին անգամ յանուն սուրբ առաքելոց կամ նշանաւոր մարտիրոսներու եկեղեցիներու և վանքերու շինութիւնք իրանց չափ ու սահման անցնում են, այն աստիճան որ այդ կրօնական ընթացքին հակառակ մի ընթացք է ծագում, կամ շատունց թաքուն մնացած մի աղանդ այդ ժամանակ առկա է գտնում յայտնուելու և յայտնուում է: Այդ աղանդն է թոնդ-

րակեցոց աղանդը, որը բոլորովին հակոտնեայն է լինում այդ ժամանակուայ բրիստոնէական պաշտամանց, այսինքն ամեն կարգ ու սարք և արարողութիւն մերժում է, բայց թէ ինք ինչ պաշտամունք է ընդունում, մեզ յայտնի չէ. ենթադրելով ասում են թէ պօղիկեանցմէ մնացորդներ լինեն և տարազգի աղանդներու հետևորդներ. ես կարծում եմ, որ ընդհակառակն հկեղեցականաց իշխանութիւնն իր չափ ու սահմանն անցնելուց և ժողովրդին էլ հոգեկան հաւատին նիւթականի հետ փոփոխուելուց ծագում առած կամ թաքուն եղած այդ աղանդ յայտնուում լինի:

Այո, մեծարելի ունկնդիրք, թոնդրակեցիք կոչուած աղանդաւորք, նոյնպէս արևորդիք կոչուածներն և այսօրուայ Տէրսիմ լերան վրայ բնակող զազայք, ամենքն էլ Հայաստանեայց եկեղեցուց դուրս մնացած հայոց աշխարհի զաւակներն են, ինչպէս այսօր օրթոդոքս, այսինքն բաղկեդոնիկ, բաթօլիք, բրօքէստան և կէսկէս կոչուած մահմեդականք ամենքն էլ հայոց աշխարհի կամ ազգի զաւակներն են: Պատմութեան մէջ տեսնում ենք, որ ամեն ուղղափառութիւն թիւրափառութիւն է առաջ բերած, ինչպէս ամեն բռնաւորութիւն՝ ազատականութիւն, վերջապէս ամեն չափազանցութիւն իրան հակառակ չափաւորութիւնն է ունեցած. ուստի զարմանալի չէ, որ մեր Հայաստանեայց եկեղեցու վերջնադարեան ուղղափառութիւն նախադարեան հերետիկոսութեանց կամ հերձուածողութեանց երևման տեղի տայ: Պէտք է գիտենանք, որ նոր նշանակութեամբ ուղղափառութիւն նշանակում է, ծոմապահ, պատկերապաշտ, նշխարապաշտ, մարեմապաշտ, սրբերն իրան պաշտպան և բարեխօս բռնող, ուխտագնաց եկեղեցի երթեկող, յաճախ խօստովանող, կղերականաց ամեն գաղափարներն ընդունող քրիստոնեայ: Այդ վերջին կերպարանաւորութիւն է Հայաստանեայց եկեղեցու բուն Հայաստանում. բայց երբ

տասնմէկերորդ դարում հայոց հայրենական իշխանութիւն նախ Բիւզանդիոսի թագաւորներու նենգութեամբ և ապա Սէլջուկեան թրքերու յարձակումներով, կտրծանուում է ու ոչնչանում. մեծատոհմ հայր դադթում են Գիլիկիոյ սարերու վրայ ու այդտեղ հաստատում մի նոր աւատական իշխանութիւն, որը պարոնութեամբ սկսելով վերջանում է թագաւորութեամբ: Այդ հայկական իշխանութեան փառաւոր ժամանակներում, հայաստանեայց եկեղեցու եպիսկոպոսապետն իր աթոռը փոխադրում է այդ երկրում, իբր թէ թրքերու յարձակումներէ ապահովուելու համար հայոց իշխաններու ձեռքի տակ: ԺԲ. ԺԳ. դարերում Գիլիկիոյ հայ դադթականութիւն բարոյապէս ու նիւթապէս զարգանալով այդ երկիր իրան մի երկրորդ հայրենիք է շինում շենացնելով այն դղեակներով, ապարաններով, եկեղեցիներով ու դպրեւանքերով: Բիւզանդիոսի թագաւորութիւն զինու զօրութեամբ կարող չլինելով հայոց այդ նոր իշխանութիւնը ջնջել, ինչպէս որ հինն արեց, խորամանկութեան է դիմում և յանուն քրիստոնէական սիրոյ և խղճողութեան մեծ ջանք է անում Գիւ Մանուէլի կայսրութեան օրով և նոյն ձեռքով հայրը զաղկեղոնիկ անել, այսինքն Բիւզանդեան քրիստոնէութիւնն ընդունել տալ հայոց, որը չէ յաջողում նոյն ժամանակուայ եպիսկոպոսապետին, ներսէս Զնորհալոյն, քրիստոնէութեան լուսաւոր գիտութեամբ ու մայր հայրենեաց դպրեւանքերու վարպետներու դիմադրութեամբ, բայց այդ կրօնազրական պատերազմում, չենք կարող ասել, որ հայր առանց վէրք ստանալու պրծնում են, դժբաղդաբար վախենալով որ չլինի թէ այդ ժամանակուայ բողոքականներ համարուին, ուղղափառութիւն բառը պինդ են բռնում ձեռքերին և այդ ուղղափառութեան բառի զօրութեամբ մի շատ բիւզանդական բաներ են ընդունում անզգալաբար:

Այդ փոթորակ անցնում է թէ չէ՝ Գիլիկեան հայր, նախ բարեկամանալով, ապա խնամանալով խաչակրութեան առթով, Եւրոպիոյ մի քանի մեծատոհմ գերդաստաններու հետ, ծանօթ են լինում Եւրոպացոց, այոխնայ այն ժամանակուայ հռովմայ արքունեաց և Գերմանիոյ կայսերաց և որոնցմէ թագաւորի տիտղոս էլ են ընդունում. բայց այդ թագաւորութեան անուան ներքեւէն դուրս դալիս է որ դրա փոխարէն հռովմայ պապերն էլ, ոչ թէ միայն աշխարհային հպատակութիւնն են պահանջում հայոցմէ, հապա նաև եկեղեցական. Այդ պապական պնդապահանջման և հայկական պնդամերժման պայքարը շատ է մեծանում, այն գլխաւոր պատճառով, որ հայաստանեայց եկեղեցու վարչութիւն քանի որ մայր հայրենեաց մէջ էր, մայր հայրենեաց աշխարհային վարչութեան ձեռքն էր, այսինքն երեց, եպիսկոպոս և եպիսկոպոսապետ, ինչպէս եկեղեցականներէ, այնպէս էլ տանուտէրներէ էին ընտրուում և հոգևոր իշխանութեան հասնում, բայց երբ եկեղեցական բարձր իշխանութիւն Գիլիկիոյ հայոց աւատական թագաւորութեան մէջ է հաստատուում, այդ թագաւորական ձևն է առնում, այսինքն եպիսկոպոսապետն ու եպիսկոպոսները սկսում են թագաւորէն ստանալ իրանց իշխանութիւն վարելու իրաւունքը և անդգալաբար այդ իշխանութիւնն էլ ժառանգական են անում իրանց մէջ, որո հալառակ դրութիւն էր մեր հայաստանեայց եկեղեցու նախնական կերպարանաւորութեան. Երկրորդ դուլս պատճառն էլ եղաւ հայոց Գիլիկեան իշխանութեան առաջին տոհմին հանգելն ու մի երկրորդ տոհմի ձեռքն անցնելը, որը միտում ունէր լատինականութեան. ինչպէս որ լատինացան յետոյ և իրանց իշխանութիւն մի ֆրանսական տոհմի անցուցին. Այդ տներու իշխաններէն Օշին յաջողելով իրան կողմ դարձունել Գոստանդին անուն եպիսկոպոսապետը և ժողով ժողովի վրայ անելով, վերջա-

պէս, Գլխիկիոյ արքունիք և եկեղեցւոյ մի քանի մեծաւորը ընդունում են այդ ժողովքի մի քանի վճիռները, նմանապէս լատինական ծէսերէն շատերը և պատճառ են լինում իրանց կառավարած ազգի ու ժողովրդի կրկնակի ապստամբութեան, այսինքն աշխարհային և կրօնական Բանն այն աստիճանին է հասնում, որ Գլխիկիոյ հայոց թագաւորութիւն վերջին աստիճան տկարանում է, վասն զի ժողովուրդն երես է դարձնում իրմէ և թշնամին, Եգիպտոսի Մամլուքները առիթ գտնելով դալիս են Գլխիկիա և ամբողջ երկիրն իր քաղաքներով, գիւղերով, եկեղեցիներով վանքերովն աւարի առնում և կործանում են և թաղաւորն էլ գերի տանում, միմիայն այն պատճառով որ հայր իրանց խոստման և երդման հակառակ Եւրոպացոց հետ յարաբերութիւն են անում և գրգռում են նրանց նորէն արշաւել արևելքի վրայ:

Այստեղ չեմ կարող զանց առնել առաջ բերելը մի վերջնադարեան հայոց կաթողիկոսի նուրբ հայեացքը հայաստանեայց եկեղեցու վրայ որ ի Գլխիկիա և յունաց յաշխարհ. նա ասում է իր մի գրաւոր դործում. «Բայց որովհետեւ երկիրն Յունաստան էր և յունաբնակ և մերքն ևս ընդ նոսա յարեցեալք, ոկսան նոյն այն սովորութեամբ վարիլ, բարուք, լեզուօք, հանդերձիւք, ուտելեօք և ըմպելեօք և այլովք որ ըստ աշխարհի և այս այնքան մինչ գրեթէ հայ անուամբ և լուսաւորչական կրօնիւք (և այս ևս ոչ բոլորովին) միայն էին ի մէնջ. իսկ այլովք ամենիւք դատեալք և որոշեալք ի մնացորդաց յերկրոջս հայոց. վասն որոյ անկաւ յայնմհետէ այլայլութիւն և մեծ խտրութիւն ի մէջ յունաստանաբնակաց և հայաստանաբնակաց թէ վանականաց և թէ աշխարհականաց, որ տևէ իսկ հաստատապէս մինչև ցայսօր»:

Այդ տողերը գրողն է Սիմէօն կաթողիկոսն, որ 1763 թուէն մինչև 1780 թիւը արժանաւոր եպիսկոպոսապետու-

Թիւն է վարած և որու մասին պատմութիւնը զանազան գովեստներ տալուց յետոյ. ասում է, լաւապէս տեղեակ էր հին և նոր կտակաբանաց և վարժ արտարին գրող:

Հայոց աշխարհային երկրորդ աստիճանի իշխանութիւնն էլ բոլորովին քնջուելուց յետոյ Հայաստանում, չբռնովմայ պապերը իրանց այս արածներու խնդրելով Հեթում և Օշին թագաւորներուն, երկուքն էլ լատինաց հակուած մարդիկ իրանց խարխուլ թագաւորութիւն ամրացնելու համար, Դոմինիկեան և Ֆրանչիսկեան կարգերէ բարոզիչներ է դրիւմ եկեղեցակալութիւն անելու Հայաստանում և Կիլիկիայում, որը թէ որ կատարուէր այն ժամանակ, Հռովմայ պապերն էլ անբաւ ոսկի, զօրք, զէնք էին դրկիւլ Հայաստան, թշնամիք դուրս վանելու և Հռովմայ մարմնաւորապէս և եկեղեցականապէս հպատակ թագաւորութիւն հաստատելու, բայց միւրև յիշուած պատճառներով այդ մեծ բանը գլուխ չեկաւ: Բայց Հռովմ չյուսահատուեց թէև ոչ խնդրող թագաւոր էր մնացել և ոչ էլ մի որ և է լատինական իշխանութիւն Արևմտեան Ասիայում խաչակրութիւնէն: Յովհաննէս ԻԹ պապը իր հոգևոր զինուորականացմէ մին Բարդուղիմէոս անուն տասնչորսերորդ դարում (1333 թուերուն) մեծ հայոց աշխարհ է ուղարկում, նոյն աշխարհի վրայ եպիսկոպոս ձեռնադրելով. դա և իր ընկերները յաջողում են ամենաթշուառ հայաստանի ամենաողորմելի զաւակներէն, փառք ոտանալու ասպարէզ ցոյց տալով նրանց, յանուն դիտութեան և ուսման, սկօլաստիկական մի դպրոց հաստատել և պապականութիւն հաստատող և վաւերացնող մի աստուածաբանութեան ուսմունք սորվացնել բրանց և դրանց ձեռքով Հռովմայ եկեղեցական աշխարհակալութիւն ծաւալել: Ամենախորին թշուառութեան մէջն ընկան հայք առաջին անգամուն, իբրև նորերևան բան իրանց աշխարհում, այդ դոմինիկեանց գոյութիւն ընդունում են դրանց իրանց մէջ

իրիս բարեկամ, բայց յետոյ երբ տեսնում են որ դրանց նպատակ ուրիշ բան չէ, հապա իրանց լեզուով, կրօնքով, կեանքով և ամեն բանով լատինացնել, լատին մկրտելով և մի լատին ժողովուրդ հաստատել իրանցով իրանց մէջ, վեր են կենում և դիմադրում իրանց ամենայն զօրութեամբ և յաջողում են կանգնեցնել դրանց կրօնածաւալումը, որը կրօնամոլութեան դառնալով, դրանց հետեւողներն իրանց կրօնքին հետ իրանց ազգն էլ, ցեղն էլ են ուրանում և տարադրուելով իրանց հայրենի երկրէն, գնում են փռանկաց երկիր կամ փռանկներու պաշտպանութեան պտնուած տեղեր, Իզմիր և Պօլիս: Այդ հոովմէական քրիստոնէութիւն տարածողները կոչւում են Ունիթօրներ, որոնք խառն են լինում լատին կրօնաւորներու հետ, այսինքն Դոմինիկեանց հետ ու սկսում են հայոց քրիստոնէութիւնը պարսաւել, նախատել և Նւտիքական հերիտիկոսութիւն կոչել: Մի տարուց աւելի տեսնւմ է այդ ունիթօրներու ջանքն ու աշխատանք հալքը լատինացնելու, բայց չեն յաջողում, միմիայն այն պատճառով որ թէ որ հայոց եկեղեցականք անդալրութեան և անգլիտութեան մէջ էին ընկած, իրանք ևս առաւել խաւարապաշտութիւն էին քարոզում, աստուածաբանութեան և իրաւաբանութեան բառերու ներքեւ. զարմանալին այն է որ, այդ լատին կրօնաւորները, որոնք կարծում էին ուսմունք և դպրութիւն տալ անուսում և անդալիր աղբին, իրանց առաջն են դուրս գալի հսկայ, անխոնջ գրողներ ու հալառակորդներ հայոց դպրեպանքերէ, Յովհան Որոտնեցի և Գրիգոր Տաթեւացի վարդապետները. թող մի շատ ուրիշ վարդապետներ էլ, որոնք այդ դարերում մեր եկեղեցին և եկեղեցու վարդապետութիւնքը պաշտպանում են անտէր հայաստանում:

Պէտք է գիտենանք որ, յարգելի ունկնդիրք, ինչպէս եօթներորդ դարում հայոց ձեռագրերու ընդօրինակու-

թիւն է լինում կարելի եղածին չափ ուղղելով նրանք վերջին տիեզերական ժողովքներու վարդապետութեանց համաձայն, նոյնպէս չորեքտասաներորդ և հնգետասաներորդ դարերում կրկին անգամ վերաուղղումն է լինում պրշագրերու օրինակութեանց մէջ, այդ դարերու ընդունուած վարդապետութեանց մերձաւոր. այդ օրինակութեանց շատերն էլ այդ ունիթօրներու ձեռքով է լինում և շատ անգամ ձեռագրեր էլ են շինուում իբրև նախնեացմէ մնացած, ինչպէս որ է *Դաշանց թուղթ* կոչուած շինծու գրուածքը. և այն և այլն:

Ի՛նչ էք ասում, պատուական ունկնդիրք, բուն իր աշխարհում իր աշխարհային շինութենէ կործանուած մի ազգ, հարստահարիչ և աւարառու բռնապետներու ձեռքէն իր հայրենիքէն դուրս ցրուած մի ազգ, իր նախնեաց քրիստոնէութիւնը պաշտպանելու միճակուած մի ազգ. ինչպէս կերպարանափոխ չէր կարող լինել այդքան աշխարհային փոփոխութեանց և այդքան կրօնական ձեռնձգութեանց ներքեւ: Այո, կարող էր լինել և եղաւ. բայց եղելութիւն միշտ արտաքին է եղած, ներքին չէ եղած, դեռ ևս հայր սահում են իրանց սրտերում իրանց նախնեաց, այսինքն Թադէոս և Բարթուղիմէոս առաքելոց, Գրիգոր, Ներսէս, Սահակ Պարթևներու քրիստոնէական հոգին և պիտի պահեն միշտ մինչև որ այդ հոգւով ապրելու ժամանակին հասնեն:

ԺԴ. դարուց մինչև ԺԵ. դար եղած ժամանակամիջոցում, երբ Օսմանեան թուրքերն իրանց սուլթաններու առաջնորդութեամբ և քրիստոնէիցմէ յափշտակած տղերքով կազմած եէնիչերիներու զինու զօրութեամբ սկսել էին բռնանալ և տիրապետել արևմտեան Փոքր Ասիոյ և արևելեան Եւրոպիոյ թերակղզիներու մանր մունր իշխանութեանց վրայ և ահ ու սարսափ սփռել ամբողջ քրիստոնեայ աշխարհներու վրայ, Դոմինիկեան և Ֆռանչիս-

կեան կրօնաւորք արեւելքում անգործութեան մէջ էին՝ ընկած հռովմայ պապերուն գերիշխանութիւնը ծաւալելու գործին մէջ, կամ թէ թաքուն և ծանր էին շարժ գալիս այն տեղեր, ուր պաշտպանուած էին մի որևէ կաթօլիկ տէրութեան դեսպաններէ և հիւպատոսներէ, ինչպէս Ֆրանսայու և Վենետիկու ժէ. դարու սկզբում եղուիթներն են դուրս գալի և նախ Պօլոնիոյ մօտ 100,000 հայերին բռնութեամբ հռովմայ եկեղեցուն միացնելէն յետոյ, հասնում են Կ. Պօլիս, իրանց կիկղեցին կամ վանքին են հաստատում ու սկսում Ֆրանսիոյ դեսպաններու պաշտպանութեան ներքե, երբեմն թաքուն երբեմն յայտնի, հրբեմն էլ կեղծաւորութեան դիմակով ծալտուած Կ. Պօլսոյ հայոց ժողովրդի մէջ մտնել և իրանց հետևողներ ճարել և յիրաւի մի դար ամբողջ աշխատելէն յետոյ, իրանց հակառակ պատրիարք վար առնելով աթոռէն և իրանց նպաստաւոր պատրիարք նստացնելով աթոռը, երբեմն էլ պատրիարքներ քստորել տալով և մինչև անգամ գերի տանելով Ֆրանսա, Աւետիք պատրիարքն օրինակի համար, յաջողում են վերջապէս 16 վարդապետ, 22 երէց, 100 աշխարհական և 20 — 30 ի չափ էլ կին մարդիկ իրանց կրօնքին դարձունել, այսինքն կաթօլիկացնել, բայց թէ ինչ է եղել այդ ժամանակուայ քարոզած կաթօլիկութիւն հայոց, այսպէս է նկարագրում մի ականատես յիշատակագիր, նախ՝ այդ կաթօլիկ եղսդ հայուն նախատել տալ և իբրև դժոխացու նկատել իր քրիստոնեայ ազգայինքը, համարելով նրանց հերետիկոս և հերձուածող և այլն, ամեն բանէ առաջ նորադարձները քահանայ ձեռնադրել կամ թէ իբրև եղուիթ կրթել ու մեծցնել, ապա ղրկել քարոզելու հայոց. թէ արու և թէ էգ մարդկանց մարմնաւոր մեղքերն ընդդէմ մարմնու համարել և ոչ ընդդէմ հոգւոյ և թէ որ մէկն այդ մարմնաւոր մեղքը գործում լինի, եօթն անգամ ողջոյն քեզ Մարիամ ասել տալ նրան Մարիամու պատկերին առջև ծնկի դա.

լով թողութիւն գտնել տալ. մեղքերը թեթեալներու համար էլ խոստովանութիւնը կրկնել տալով. ամեն շարաթիւ ուրիշ զրանց նման բաներ, որոնցմով զրեհիկ մարդիկ շուտով համոզուում են եղել. բացի այդ կրօնական հրապուրէն, կայ եղել նաև քաղաքական հրապուր, փռանկանալ, փռանկանալով փռանկերէն լեզուն իմանալ, մի խօսքով կեանքի փոփոխութեան յոյս, այն կեանքէն մանաւանդ որ անտանելի էր արդէն:

Միևնոյն բանը լինում է նաև Փոքր Ասիոյ և Հայաստանի զլիաւոր քաղաքներում, ինչպէս Եւդոկիում, Տրապիզոնում, Կարինում, Մշու գիւղերում, Արդուինու գիւղերում, Ախլխա, Թիֆլիզ և այլն: Վերջապէս եզուրտները արևելքում ոտք դնելուց երկու հարիւր տարի յետոյ, հազիւ 40,000 կաթոլիկ հաւատքով ժողովուրդ են կազմում հայոց ազգէն և այս դարուս սկզբում քաղաքական խնդիրներէ պատճառուած մի արսորանքէ յետոյ լինում են եւրոպական տէրութեանց ձեռնառութեամբ մի առանձին հասարակութիւն հայ կաթոլիկ անունով:

Եզուրութեան հարուած կամ որ նոյնն է պրօպագանդայի տուած հարուած հայոց ազգին շատ մեծ է, ամեն տեղ ուր որ հայր գնացել են վալթականութեամբ, դրանք նրանց քամակին հասել են Պարսկաստան, Հնդկաստան, Լեհաստան, Ռուսաստան, Վրաստան, Օսմանցոց երկիր, Փրանսա, Իտալիա, Աւստրիա, Հունգարիա և այլն: Բայց մի իրողութեամբ մի փոքր փոխարինում է Հռովմայ տուած այս հարուած հայոց ազգին, Մխիթարեան կաթոլիկ կրօնաւորներու հաստատած դպրեմանքով, որոնք ընդունելով պապերու զերիշխանութիւն իրանց վրայ առանց իրանց ազգի պատմութեան և գրականութեան հետ խզուելու, ծաւալում են հայկական և եւրոպական դպրութիւնը հայոց ազգի մէջ միանգամայն ծաւալելով Հռովմայ նպատակի. բայց և այնպէս ազգային

պատմութեան և դպրութեան գիտութիւնն իրանց մէջ նշանաւոր մարդիկ է առաջ բերում, որոնք իրաւ է, մեծ դարկ ու մղում են տալի հայոց նախնի դպրութեան մշակութեան և ծաւալման, բայց միևնոյն ժամանակ հռովմայ եկեղեցու վարդապետութեանց ծաւալման էլ նըպաստում են հայոց մէջ:

Այդ պապականութեան ծաւալման առաջն առնելու համար, պէտք է ասեմ որ, մեր եկեղեցականք մեծ ջանքեր են արել հէնց տպագրութեան գիւտի երևման ժամանակէն սկսած, Յերոպոլոյ նշանաւոր քաղաքներում, նոյնպէս հայաբնակ մեծ քաղաքներում դպրոցներ, տպարաններ հաստատելով և շարունակ զգուշացնելով հայոց ժողովուրդը պատական քարոզութենէ, բայց եւրոպական կեանքի մեծ առաւելութիւն ասիական կեանքի վրայ միշտ յալթանակը տարած է, գէթ ըստ երևութին:

Մեր այս դարուս կիսուն մէջ, պապականութիւն ծաւալող քարոզիչներու նման, Ամերիկացի քարոզիչներ էլ են երևում մեր աշխարհում, դրանք էլ ճիշտ պատական քարոզիչներու նման նախ բարեկամութեամբ են վարւում հայոց հետ. ասելով թէ նրանց ուսմունք և գիտութիւն են բերում Ամերիկայէն և յիրաւի իրենց տները հայոց թաղիրում են հաստատում գրագարաններով և բնական գիտութեանց գործիքներով դարդարած, ցոյց տալու համար իրանց այցելուններուն գիտութեան հրաշալիքը: Հայր դեռ դրանց պաշտօնը, նպատակը և գաղափարները չճանաչած, հիացած նրանց հայախօսութեան և գիտութեան վրայ, անկեղծութեամբ ընդունում են դրանց իրանց մէջ և նրանց են հարւում մինչև այն ժամանակ որ դրանց պաշտօն և նպատակ յայտնւում է և նրանց էլ ճանաչում են որ Միացեալ Նահանգներում կազմուած մի մեծ ընկերութեան անդամները կամ ծառայողներն են դրանք ս. Գիլբըր բոլոր աշխարհ տարածելու և միևնոյն

ժամանակ տիեզերական ժողովքներով հաստատուած քա-
 թովիկ և օրթօդօքս եկեղեցիներու կարգեր և կանոններու
 և արարողութեանց դէմ դործելու, որոնց կարգէն համա-
 րում էին և հայոց եկեղեցին իր ծէսերով և արարողու-
 թեամբ: Ինչպէս որ հռովմայ եկեղեցին իր բացարձակ
 միապետական վարչութեամբ և ինքն իրմով հեղինակած
 և ընդունած վարդապետութեամբ և որ ամենէն մեծն է,
 բոլորովին աշխարհական մարմնու ազդեցութենէն և մաս-
 նակցութենէ ջոկուած դրութեամբ և մարդկային բանա-
 կանութիւն ամենևին բանի տեղ չգրած և նրա տեղ մի-
 կոյր հաւատ և հնազանդութիւն պահանջողութեամբ հա-
 կառակ էր բոլորովին մեր հայաստանեայց եկեղեցու թէ
 կառավարութեան և թէ վարդապետութեան, և անկարելի
 էր եղել մի կատարեալ միութիւն, նմանապէս երիցակա-
 նաց քրիստոնէութիւնն էլ կամ եկեղեցին իր ըննողական
 դաւանութեամբ, հասարակապետական վարչութեամբ և
 որ և է արարողութեան մերժողութեամբ, բոլորովին հա-
 կառակ էր հայաստանեայց եկեղեցու դրութեան: Մի ե-
 կեղեցի, որ տասնութ երկար դարեր, կեանք, պատմու-
 թիւն, նշանաւոր անձնաւորութիւնք, եկեղեցական ազգա-
 յին ժողովներու սահմանադրութիւնք, գրականութիւն,
 անթիւ գրչագրեր, և գրքեր. ս. Գրքի մեկնութիւնք ա-
 ղօթքներ, շարականներ է ունեցել և որ ամենէն մեծն է
 և խիստ թանգ բան իր համար, իր անսպառ արիւնը,
 հանճարը մի խօսքով իր աստուածատուր հայրենիքն է
 զոհել այդ իր քրիստոնէութեան կամ եկեղեցու համար,
 միթէ այնպէս մի քանի Ամերիկացի բարոգիչներու կամ
 թէ պրօպագանդայի վարդապետներու խօսքին նայելով
 կարող էր մի դէն թողնել ու հռովմէական կամ ամերիկա-
 կան քրիստոնէութիւնը ընդունել. կարծեմ ոչ, ինչպէս որ
 էլ չընդունեց, բայց խօսքը, դրամը, գործքը, պաշտօնը,
 շահը, կեանքի և կացութեան փոփոխութեան պէտքը շատ

մեծ բաներ կարող են անել տալ նրանց, որոնք սաստիկ պէտք ունին այդ բաներէ և այդ բաները խոստացողներէ։ Այդպէս էլ եղաւ բուն իրողութիւն։ Հայք ցիրուցան մի ժողովուրդ լինելով արեւելքում և անկարող ամեն տեղ իրանք իրանց պաշտպանել և հոգալ, կարօտ են եղած զըստանց օգնութեան, այդ օգնութիւն ընդունելէն անդգալաբար խաբուելով և իրանց կրօնքը փոխարէն տալով։ Այսօր ուր որ կայ հայ բաժնիկ և հայ բողոքական, ամենքն էլ խորին տգիտութեան մէջ են իրանց ազգային դպրութենէն և հայրենական պատմութենէն, դտնուելով քաղաքացիական նեղ դրութեան մէջ, իրանց հացի կամ անդորրութեան համար կեանքի փոփոխութեան են զիմել իրանք և ոչ կրօնքի։ Բայց զուր տեղ, Այդպէս է եղած երիցականաց քրիստոնէութեան քարոզութիւն հայոց մէջ։ Ի հարկէ երբ երկար ժամանակ մի ազգ կամ ընկերականութիւն մի կրօնք է դաւանած իբրեւ ճշմարտութիւն, երբ միևնոյն ազգէ կամ ընկերականութենէ մարդիկ դուրս են պալլ և իրանց ազգայնոց կամ ընկերականաց, ձեր կրօնքը ստութիւն է, խաբէութիւն է, ասում են, այդ մարդիկ հալածանքի կենթարկուին ուժաւորի կամ բաղմութեան կողմէն, այդ այդպէս է եղել ամեն կրօնքներու և ամեն դաւանութեանց մէջ։ ուրեմն զարմանք չէ հրք պապականութիւն և բողոքականութիւն հայոց մէջ էլ տարածուել կամենալու ժամանակ, այդպիսի բաներու պատահած լինին, շատ անգամ երևցած է որ յատուկ մարտիրոսացած են նոր նրօնք կամ նոր ազանդ քարոզողներն այն ազգի մէջ, որ հաստատուել են կամեցել, միևնոյն բանն արին պապականք գրգռուած եղուիթներէ, նոյնպէս վարուեցան և հայ բողոքականք իրանց ամերիկացի քարոզիչներէ խրատուած։

Սակայն ինչպէս պապական հայոց մասին ասացինք թէ Մխիթարեանք փոխարինող եղան հռովմայ տուած

հարուածներուն հայոց նախնեաց գրականութիւն յարուցանելով, մի այդքան էլ կարող ենք ասել երիցական հայոց մասին էլ, որոնք պահպանելով իրանց ազգի կենդանի բարբառը գործածութեան մէջ, մեծ մղում տուն կարելի եղածին չափ գրականելով թարգմանութեամբ ս. Գրոց և հրատարակութեամբ զանազան պիտանի պիտելիքներու:

Մտադրութիւն, խնդրեմ մեծարելի ունիւնդիրք, ահա վերջացնում եմ ճառախօսութիւնս, մի մեծ և կարևոր բանի երևութիւն ենք ականատես լինելու: Հայր դուրեքէ հետէ տարագիր եղած իրանց հայրենիքէն, զըրկուած ազգային փառքերէ, ամփոփուած ու խմբուած է լինում իրանց եկեղեցու ծոցում և իրանց բահանայի շուրջառի ներքև իրանց անձնապահպանութեան համար, լինելով մի կրօնական մարմին կամ հասարակութիւն, սր երկրում որ գտնուում են: Ինչպէս տեսանք շրջապատուած պապական, երիցական, և երբեմն իսլամական կրօնահրաւէրներէ, հալը՝ գրեթէ ամեն օր դրանց կրօնական խնդիրներով և վիճաբանութեամբ ականջները լրցուած ու խցուած, ինչ էր լինելու նրանց գաղափարները կրօնի կամ եկեղեցիներու վրայ. ձեզ եմ թողնում մտաբերել: Այո, հայոց խելքի մէջ այսօր, ս. Գիրք, հայրապետական վարդապետութիւն, ժողովքներու կարգ կանոն, եկեղեցու խորհուրդներ և արարողութիւնք և այլն. ամենքն էլ բանիբուն բաներ էր լինելու: Իր աչքի առաջ ճշմարտութիւնը գրեթէ կորած առանց նշանակութեան մի բան էր լինելու, առանց ուսմանց ու գիտութեանց իրանց բանականութիւն զօրաւոր չէր կարող լինել: Այդ վիճակումն էին գտնուում հալը, երբ այդ զանազան հարուածներն իրանց սրտերում ազգայնութեան զգացմունքը զարթեցուցին և գնալով աճեցաւ այդ սուրբ զգացմունք և եղաւ փորձաքար ճշմարտութեան. իբրև ճշմար-

տուժիւն ընդունելու: Ինչ բան որ իրանց ազգայնութեան է դաշուամ այսօր, նոյն իսկ ամենաբացայտ ճշմարտութիւնը՝ մերժում են նրանք ասելով թէ իրանց ազգայնութեան վնասաբեր է այդ Խնչու համար այդքան, վաստի որ պատմութեան լուսովը տեսնում է, որ իր նախնիք թէ օր քրիստոնեայ են եղել և քրիստոնէութիւն պահպանել, ինչ զնով որ լինի այն, միմիայն ազգովին փրկուելու համար: Իրանց եկեղեցին Հայաստանեայց կոչուելու համար են եղել, տեսնում է, որ այդ հոգով գրուած են լինում, ոչ միայն պատմութիւնը, հապա նաև ճառք, քարոզք և ամեն գրուածք: Այդ հոգով սարքուած է եղել ամեն եկեղեցական կարգ ու սարք: հայոց քրիստոնեայ ազգայնութիւն պահպանել արեւելքում և ուրիշ ոչինչ: Այդ է եղած մեր նախնեաց նշանաբան և այդ նշանաբանն է այս օրուայ հայոցն էլ թէ պապական լինին դրանք և թէ երկցական կամ թէ որևէ անձնական գաղափարներով: Բայց սակայն, ցաւալին այն է որ, ահա այժմ էլ հայոց այդ ուրբ զգացմունքին դէմ վեր են կենում այդ իրանց կրօնը տարածել ցանկացող իշխանութիւնք ամեն տեսակ հնարք բանեցնելով իրանց իշխողութեան մէջ, իրանց հպատակ եղող հայոց սրտերում ջնջել այդ ազգային զգացմունք:

Արդ, հարկ եմ համարում ճառիս աւարտմանը, ասել, որ ես եկեղեցական չեմ: հապա իր ազգային պատմութիւնը ուսումնասիրող մի հայ քրիստոնեայ աշխարհական և այս ճառունս միայն այն իրողութիւնք եմ առաջ բերած, որոնք իմ ազգային պատմութեան մէջ ուսումնասիրել եմ:

Կ. Պօլսոյ հայոց ազգային գրքատան գրքապետ

ՄԱՐԿՈՍ ԱՂԱԲԷԳԵԱՆՑ

Կ. Պօլիս Պոյաճի գեղ 1893 յուլիս 20, օգոստ. 1.